



## ԱՆՆԱԽԱԴԵՊ ՉԵՌՆԱՐԿ

**Իրանահայ անկախ միությունների, մամուլի, Պատգամավորական ժողովի մի խումբ անդամների և անհատ մտավորականների կողմից կյանքի կոչված Միասնական հանձնախմբի նախաձեռնությամբ կազմակերպված ձեռնարկները ավարտվեցին մեծ հաջողությամբ:**

Ինչպես արդեն «Արաքս»-ի նախորդ համարից տեսնելիք է ընթերցողը, առաջին անգամը լինելով, իրանահայ անկախ միությունների, մամուլի, Պատգամավորական ժողովի մի խումբ անդամների և անհատ մտավորականների կողմից կյանքի կոչված Միասնական հանձնախումբը Հայոց Ցեղասպանության 92-ամյակի առիթով Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) դասախոս, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց Ցեղասպանություն-90» ժողովածուի համահեղինակ, ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի վարիչ ղոկտ. Ալեք. Բախչյանի ղեկավարությամբ և նախաձեռնությամբ մեծ գոհացում ստեղծեցին հանդիսատեսի մոտ:

Պրոֆ. Ա. Բախչյանը իր ժամանակը առաջին օրը ապրիլի 26-ին, ելույթ ունեցավ ՀԱՄ «Րաֆֆի» համալիրի մեծ դահլիճում: Այդ օրը ավելի քան հազար հոգի լսելու էին եկել հայաստանցի մտավորականին:

Ապրիլի 27-ին, առավոտյան, դոկտ. Ա. Բախչյանը ելույթ ունեցավ Իրանահայ գրողների միության կենտրոնատեղում: Նույն օրվա կեսօրին մտերմիկ հանդիպում էր կազմակերպվել ՀԱՄ «Րաֆֆի» համալիրի պատասխանատուների հետ, իսկ երեկոյան սիրելի հրավիրյալը ելույթ ունեցավ Իրանահայ ազգային և մշակութային միության սրահում:

Ապրիլի 28-ի առավոտյան դոկտ. Ա. Բախչյանը ելույթ ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության դահլիճում: Իսկ երեկոյան նույն սրահում «Արաքս» շաբաթաթերթի նախաձեռնությամբ կազմակերպվել էր Հայոց ու պատասխանների գեղեցիկ մի հանդիպում:

Թեհրանահայությունը և իմասնավորի նրա մտավոր դասը աշխույժ ներկայություն ունեն ձեռնարկներում: Առաջին ժողովրդական հանդիպման ընթացքում, իր ներկայությունը էր բերել նաև ՀՀ լիազոր և արտակարգ դեսպան պրն. Կարեն Նազարյանը: Նա օրվա առիթով ունեցած իր ելույթում բարձր գնահատելով Միասնական հանձնախմբի տարած աշխատանքները շեշտեց, որ նման առիթներում դեսպանությունը մշտապես պատրաստակամ է ցուցաբերելու իր աջակցությունը և դերակատարությունը:

Միասնական հանձնախմբի անունից, վերոհիշյալ ձեռնարկների մասնակցությունը իրավեր էր առաքելով այսպես կոչված «ազգային իշխանության» ու թեմիս Առաջնորդին, սակայն դժբախտաբար ոչ մի արձագանք, ոչ ոք չեկավ, բոլորը զբաղված էին, Առաջնորդից դեմքաբան:

Թեև անհիմատ է այստեղ քննարկման նյութ դարձնել այս հարցը, սակայն, նույն ժամանակ, պարտք համարեցինք հիշատակել այս իրակացությունը, որ, վաղվա օրը, մարդիկ իրենց սխալը արդարացնելու համար այլ և այլ պատրվակներ փնտրելու չդիմեն: Մենք ու նաև բոլոր հարցնողաց, մի քիչ բաց աչքերով մայելու դեպքում, կարող ենք տեսնել անկախ և ոչ-կուսակցական տեղերում մշտապես այդ բացակայության պատճառը:

→ 6,7,8

**ՓԱԿԱՆԱԳՆԻ ՎԱՃԱՌՔ**  
Վաճառվում է 17 մետրանոց մի խանութի փակահանգին:  
Խանութն ունի՝  
- 6 մետր բալկոն, - հոսանք, ջուր, գազ,  
- երկու գիծ հեռախոս, - գեղեցիկ կահավորում:  
Հեռ՝ 0912-1399380

## Ստամբուլի հայկական դպրոցների սպառնում են



Ստամբուլի հայկական դպրոցները «վերջին նախազգուշացում» վերնագրով անստորագիր սպառնալիքներ են ստանում:

Ինչպես հաղորդում է թուրքական «Միլլիեթ» թերթը՝ վկայակոչելով «Ակոս» հայկական թերթը, հայկական դպրոցներ ուղարկվող անստորագիր նամակներում, մասնավորապես, գրված է. «Որոշ հայեր ներգրավված են անջատողական շարժման մեջ, որը վտանգ է ներկայացնում Թուրքիայի ամբողջականության համար: Մեզ շատ լավ հայտնի են նրանց բնակարանների և աշխատավայրերի հասցեները: Այնպես որ, եթե, որ հայերը ցեղասպանության մասին թեմաներում կլինեն իրականության և պետության աշխատանքները: Մենք ուղարկությամբ հետևում ենք, թե նրանք այդ դերն ինչպես են կատարելու»:


Հակառակ դեպքում անստորագիր նամակների հեղինակները սպառնում են հաշվեհարդար տեսնել հայերի հետ: «Միլլիեթը» նաև հաղորդում է, որ հայկական դպրոցների ահաբեկման լուրը հաստատել է տեղի ազգային կրթության բաժնի ղեկավար Աթա Օզերը: Նրա հավաստմամբ՝ անցած շաբաթ աշխատավայրում իրեն այցելել են Պոլսի հայկական համայնքի որոշ ներկայացուցիչներ, որոնք նման նամակներ են ստացել:

Թերթը գրում է, թե Աթա Օզերը նրանց հավաստիացրել է, որ պետությունն իրենց քիկունքին է: Նա գրավոր դիմել է Ստամբուլի նահանգապետի աշխատակազմին՝ խնդրելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել, «որպեսզի չլինի անգամ չնչին անտարբերություն, ինչպես Հրամատ Դիմքի սպանության պարագայում»:

## ՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Ե ԸՅԴԻ ԱՅԼԱՍԵՐԺՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀԿ Բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանը վերջերս «Ազատություն» ռադիոկայանով հայտարարել է, թե սփյուռքում բացի դաշնակցականներից, ոչ ինչակյանները և ոչ էլ ռամկավարները գոյություն չունեն: Այս առիթով հայտարարություն է տարածել Սոցիալ-դեմոկրատ ինչակյան կուսակցության մամուլ դիվանը:

«Հովհաննիսյանի և իր գլխավորած կուսակցության այս մոտեցումը չի գործացնում մեզ: Նրանք վաղուց վարակվել են իրենց կուսակցությունը ամենքից ու ամեն ինչից վեր դասելու հիվանդությամբ: Նրանց համար սեփական կուսակցությունը առաջ է գալիս նույնիսկ ժողովրդից ու Հայրենիքից: Վկա է պատմությունը», ասված է ՍԳԿ հայտարարության մեջ: ՍԳԿ-ն նաև հայտարարում է, որ «Ձեր վաղեմի ընկեր դաշնակցությունը» կարգախոսով ընտ-



րություններին ներկայացող այս կուսակցությունը մի անգամ չէ, որ խաբել է «ընկերներից», այսինքն ժողովրդին ու այժմ ժողովրդին հիմարի տեղ դրած, դարձյալ փորձում է խաբել նրան: Տասը տարի լինելով իշխանության անբաժան մասնիկը, լինելով մեղսակից երկրում կատարված ամեն ինչին, նա չի ուզում ոչ մի պատասխանատվություն ստանձնել կատարվածի համար, նույնիսկ դավաճանելով կուսիցիայի իր գործընկերներին»:


## «1915-ԻՆ ՍՊԱՆՎԱԾ ԸԱՅԵՐԻ ԹԻՎԸ 8 ԸԱԶԱՐ 5 ԸԱՐՅՈՒՐ Ե» Հայտարարում է թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաջոլուն

Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ծավալման ընդդեմ և պատմական ճշմարտությունների խեղաթյուրման փորձերի առանձնակի ակտիվությամբ աչքի է ընկնում թուրքական պատմական ընկերության նախագահ, դոկտ. պրոֆ. Յուսեֆ Հալաջոլուն: Ըստ Թրքական «Հուրիեթ», օրաթերթի վերջերս պրոֆ. Հալաջոլուն մասնակցել է «Արևմտյան շրջանի օկուպացումն ու ազատագրումը» թեմայով ադանացիների միության կազմակերպած շա՛տ գիտական կոնֆերանսին:

Նա այնտեղ, ըստ «Հուրիեթի», բազմափորձ հաշվապահի ճշգրտությամբ ասել է. «Տեղահատության ընթացքում ավազակախմբերի հարձա-

կումների հետևանքով սպանված հայերի թիվը առավելագույնս 8500 է: 37 հազար հայ մահացել է համաճարակներից, հակառակ դրան, Երզրունից մինչև Կարս, Բիթլիսից մինչև Արդահան ընկած տարածքում սպանվել են 530 հազար մահմեդականներ: Մենք ձեռքի տակ ունենք հայերի ցեղասպանության պնդումները հերքող լուրջ փաստաթղթեր: Ավելին, 1915 թվին ստեղծված ռազմական ատյանը քննել է 1673 մեղադրյալի գործը, որոնցից 67-ին դատապարտել է մահապատժի, 68-ին՝ ցմահ, իսկ 524-ին տարբեր ժամկետներով բանտարկության: Ըստ միջազգային իրավունքի, եթե պետական իշխանությունները պատժում են հանցագործներին,

→ 2



ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ ԵՎ ԲՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ... 3



ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՍԻՎՈՐԿԵՑ, ԵՐԲ Ե ԸԱՍՆԵԼՈՒՄԵՐ ԸՆԴՈՒՄ... 5



ԽԱՅՏԱՌԱԿՎԵՑԻՆՔ ՊԱՐՈՒՍՅՔ... 12

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԷՋ ... 9

## Ամփոփվեց ԸՇ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները

Ապագա խորհրդարանի պատկերը կԸՀ հրապարակած տվյալներով Հայտնի է՝ 5 տոկոսը Հաղթահարել է 5 կուսակցություն, Հանրապետական կուսակցություն՝ 457 032 ձայնով (32,8 տոկոս), «Բարգավաճ Հայաստանը»՝ 204 443 ձայն (14,7 տոկոս), ՀՅԴ-ն՝ 177 192 ձայն (12,7 տոկոս), Օրինաց երկիրը՝ 95 256 ձայն (6,8 տոկոս), «Ժառանգությունը»՝ 80 890 ձայն (5,8 տոկոս): Մյուս բոլոր կուսակցությունների 336 856 ձայները Համամասնորեն կաշխմվեն այս 5 կուսակցությունների միջև: 5 տոկոսը տասնամյակ է 67-68 հազար ձայնի սահմաններում: 5 տոկոսին մոտեցած կուսակցություններն են ՄԱԿ-ը՝ 4,4 տոկոս, «Նոր ժամանակները»՝ 3,3 տոկոս, «Ազգային միաբանությունը»՝ 3,6 տոկոս, «Ժողովրդական կուսակցությունը»՝ 2,7 տոկոս, «Դաշինքը»՝ 2,4 տոկոս:

Ըստ այդմ, ՀՀ ԱԺ մեծամասնական 90 մանդատներից Հանրապետական կուսակցությունը կստանա 41-ը, Բարգավաճ Հայաստանը՝ 18, ՀՅԴ-ն՝ 16, Օրինաց երկիր կուսակցությունը՝ 8, Ժառանգությունը՝ 7: Մեծամասնական 41 ընտրատարածքների կեսից ավելիում, ըստ պաշտոնական տվյալների, Հաղթել են կամ Հանրապետականներ, կամ Հանրապետական կուսակցության առաջադրած անկուսակցական թեկնածուներ, մեկ ՕԵԿ-ի և մեկ Դաշինքից:

Այսպիսով Հանրապետական կուսակցությունը խորհրդարանում, ընդհանուր առմամբ, կունենա 66 ձայն, Բարգավաճ Հայաստանը՝ 25 ձայն, Օրինաց երկիրը՝ 9 ձայն, ՀՅԴ-ն՝ 16 ձայն, իսկ Ժառանգությունը՝ 7 ձայն: ՀՅԴ-ն և Ժառանգությունը մեծամասնական ընտրակարգով մանդատներ չեն ստացել:

## Չիլիի Սենատը ընդունել է Ցեղասպանությունը դատապարտելու մասին որոշում

«ԼՐԱԳԻՐ», 06.06.07: Ս.թ. հունիսի 5-ին Չիլիի Սենատը միաձայն ընդունեց որոշում, որով կոչ է անում երկրի կառավարությանը՝ զորակցել հայ ժողովրդին և դատապարտել նրա նկատմամբ իրագործված ցեղասպանությունը: Որոշման նախագծի հեղինակն է Սենատի անդամ Ռիկարդո Նունյես Մունյոսը (Սոցիալիստական կուսակցություն), հայտնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Փաստաթղթում մասնավորապես ասվում է. Նկատի ունենալով, 1- որ 1915թ. ապրիլի 24-ին Թուրքական կայսրության այն ժամանակների մայրաքաղաք Կոնստանդնուպոլսում առանց դատավարության ձեռքարկվեց և անհետ կորավ հայ համայնքի ամբողջ ղեկավարությունը, ինչով սկիզբ դրվեց կայսրության իշխանությունների կողմից այդ ժողովրդի նկատմամբ բնաջնջման քաղաքականությանը,

2- որ 1915-1923թթ. ընթացքում դաժանորեն իրագործված ցեղասպանության հետևանքով, Կայսրության ավելի քան 1.5 մլն. ազգությամբ հայ հպատակներ, որոնք հազարամյակներ շարունակ բնակվում էին իրենց նախնիների հողերում, գրկվեցին կյանքից,

3- որ այս գարնուրեկի արարքը հանդիսացավ 20-րդ դարի առաջին երթիկ գտնում, և շատ ավելի առաջ, քան նման արարքներն իրավաբանական ձևակերպում ստացան, արձանագրեց այս ժողովրդի մարդու իրավունքների կոպիտ ոտնահարում,

4-որ հակառակ մարդկության հավաքական հիշողությունից այն ջնջելու ճիգերին և մեծ տերությունների կողմից կատարվածի նկատմամբ զգայուն մոտեցման բացակայությանը, հայերը և աշխարհով սփռված հայկական կազմակերպությունները համարաշխային հանրության կողմից արժանանում են այդ ցեղասպանության ճանաչմանը, որի գոհերն են իրենք հանդիսանում,

5- որ 1985թ.-ին այն ճանաչվեց նաև ՄԱԿ-ի հտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթախանձմամբ ժողովի կողմից, որը հայերի հետ կատարվածը որակեց որպես ցեղասպանություն,

6- որ նույնպես են վարվել նաև Ուրուգվայը, Արգենտինան, Հունաստանը, Բուլղարիան, Ռուսաստանը, Իտալիան, Լիբանանը, Շվեդիան, Շվեյցարիան, Հոլանդիան, Վենեսուելան, Լիտվան, Կանադան և Ֆրանսիան, ինչպես նաև Եվրոպայի ժողովրդի համաշխարհային խորհուրդը և ժողովուրդների մշտական դատարանը,

7- որ մեր երկիրը դեռևս այդպես չի վարվել, հակառակ իր մշտական հավատումներին առ այն, որ միջազգային հարաբերություններում մարդու իրավունքների սկզբունքը գերակայում է որևէ համաձայնագրի կամ պարտավորության նկատմամբ,

8- որ հետևաբար, Չիլիի էթիկական և բարոյական պարտքն է համապատասխան քայլեր ձեռնարկել, որոնք բխում են ՄԱԿ-ի 1985թ. որոշումից և որի համաձայն Օսմանյան կայսրության տիրապետության ներքո գտնվող Հայաստանում իրականացվել է դաժան ցեղասպանություն մի անպաշտպան ժողովրդի նկատմամբ, որը միջազգային հանրությունից և հատկապես թուրքական պետությունից բարոյական փոխհատուցում է պահանջում:

Հաշվի առնելով վերոհիշյալը, Հանրապետության Հարգարժան Սենատը որոշում է.

1- Ձորակցել հայ ժողովրդին, դատապարտելով նրա նկատմամբ իրագործված ցեղասպանությունը և

2. Գիմել Չիլիի կառավարությանը ՄԱԿ-ի 1985թ. որոշմանը միանալու առաջարկությամբ:

## Նախիջևան-Բաքու ավտոբուսային երթուղի իրանով

Հուտով Իրանի տարածքով կվերականգնվի Նախիջևան-Բաքու ավտոբուսային երթուղին: «Ռեզոնանս» գործակալության համաձայն, այս մասին տեղեկացրել է Ադրբեջանում Իրանի դեսպան Ավշար Սուլեյմանին: Ըստ վերջինի, այս հարցը լուծում կստանա մոտակա օրերին Իրանի տրանսպորտի նախարարի Բաքու այցելության ընթացքում: Ընդ որում, շուտով լուծում կստանա նաև նախիջևանցիների Իրան անվճար մուտքի հարցը, որի առնչությամբ արդեն կա համաձայնություն: Միևնույն ժամանակ «Ազերիպրես» գործակալության տեղեկությամբ, գարնան վերջին Ադրբեջանը ծրագրում է ոսկու նախիջևանյան հանքավայրերում հետազոտական աշխատանքներ իրականացնել: Հայտնի էրեք հանքավայրերից մեկը համարվում է բավականին հեռանկարային:

Նախիջևանի Իրան անվճար մուտքի հարցը, որի առնչությամբ արդեն կա համաձայնություն: Միևնույն ժամանակ «Ազերիպրես» գործակալության տեղեկությամբ, գարնան վերջին Ադրբեջանը ծրագրում է ոսկու նախիջևանյան հանքավայրերում հետազոտական աշխատանքներ իրականացնել: Հայտնի էրեք հանքավայրերից մեկը համարվում է բավականին հեռանկարային:

## Ռուսաց Ուղղափառ եկեղեցին միավորվել է

Մայիսի 17-ին Մոսկվայում տեղի է ունեցել Ռուսաց Ուղղափառ եկեղեցու ռուսաստանյան և արտասահմանյան հատվածների պատմական միավորումը, որով վերջ է դրվել եկեղեցու 80-ամյա պառակտմանը: Այն առաջացել էր բոլշևիկյան հեղափոխության հետևանքով:

Սահմանում Ռուսաց Ուղղափառ եկեղեցին ճանաչում են միմյանց կրոնական հիերարխիան և միաժամանակ առաջարկում համադրվել և միավորվել: Այն պատճառով, որ Ռուսաց Ուղղափառ եկեղեցու միավորվելու և միասնականության համարումը չի բերել իրականացմանը, որով Ռուսաց Ուղղափառ եկեղեցու միավորվելու և միասնականության համարումը չի բերել իրականացմանը, որով Ռուսաց Ուղղափառ եկեղեցու միավորվելու և միասնականության համարումը չի բերել իրականացմանը:

Մայիսի 18-ին փաստաթուղթը Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ մայր տաճարում ստորագրել են Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդը և Նյու Յորքում տեղակայված Արտասահմանյան Ռուսաց Ուղղափառ եկեղեցու միավորվելու և միասնականության համարումը չի բերել իրականացմանը:

Ցար Նիկոլայ Երկրորդին հավատարիմ և կոմունիստական ռեժիմը չընդունող հարյուր հազարավոր ռուսաստանցիներ՝ զինծառայողներ, ազնվականներ, մտավորականներ, գործարարներ և հոգևորականներ փախուստի էին դիմել քաղաքացիական պատերազմի մեջ ներքաշված Ռուսաստանից:

Մայիսի 18-ին փաստաթուղթը Մոսկվայի Քրիստոս Ամենափրկիչ մայր տաճարում ստորագրել են Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդը և Նյու Յորքում տեղակայված Արտասահմանյան Ռուսաց Ուղղափառ եկեղեցու միավորվելու և միասնականության համարումը չի բերել իրականացմանը:

Ստորագրված փաստաթղթով Ռուսաց Ուղղափառ եկեղեցին և Արտասահմանյան Ռուսաց Ուղղափառ եկեղեցին միասնականության համարումը չի բերել իրականացմանը:

Հանդիսավոր միջոցառմանը ներկա է եղել նախագահ Վլադիմիր Պուտինը: «Եկեղեցու միասնության վերականգնումը կարևոր պայման է Ռուսաստանի ժողովրդի կորսված միասնությունը վերագտնելու համար», - ասել է նա:



## ԿՅԱՆՔԻՑ ՇՆՈՒՑԱԿ ԳՈՒՐ ԳԱՄՈՒՐՅԱՆԸ

Մեր մշակութային կյանքը ծանր կորուստ կրեց. հայ դասական երգարվեստի հարուստ ներկայացված աղբյուրացի: Կյանքից հեռացավ հայ ամենատաղանդավոր ու համբավվոր արտիստուհին՝ «հայկական սոփակը», Գոհար Գասպարյանը: Իր ծայրի անզուգականությամբ, կատարողական վիրտուոզությամբ նա հայկական երգարվեստը հարստացրեց իր հարուստ ու շքեղաշուք մեկնաբանություններով: Հայաստանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմում հանդես է եկել 23 օպերաների գլխավոր դերերգերով, իսկ նրա համերգային երգացանկում տեղ են գտել ավելի քան 500 ստեղծագործություններ:



Արտիստի, Սոցիալիստական աշխատանքի հերոսի, Հայաստանի ժողովրդական արտիստի կոչման, ստացել է «Մերոպ Մաշտոց» շքանշանը: Հայ մեծանուն երգչուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գոհար Գասպարյանի մահվան կապակցությամբ ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանի որոշմամբ ստեղծվել էր կառավարական հանձնաժողով՝ ՀՀ վարչապետի նախագահությամբ: Գոհար Գասպարյանի հուղարկությունը տեղի ունենավ մայիսի 19-ին կոմիտասի անվան այգու պանթեոնում, իսկ քաղաքացիական հոգեհանգիստը մայիսի 18-ին:

## Կարծես արժանացել են առաջին մրցանակի, ասում է Հայկոն

Հայաստանի մասնակցությունը «Եվրատեսիլ-2007»-ում անցավ մեծ հաջողությամբ, քանի որ կրկին ձեռք է բերվել հաջորդ տարի անմիջապես մրցույթի եզրափակիչ փուլին մասնակցելու ուղեգիրը: «Թեև գրավեցի ութերորդ տեղը, սակայն այնպիսի սպավորություն է ստեղծվել, թե արժանացել են առաջին մրցանակին: Ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում «Anytime you need» երգի կատարումը շատ լավ է ընդունվել», - ասուլիսում ասաց Հայաստանը ներկայացրած երգիչ Հայկոն:



Նրա խոսքով, «Եվրատեսիլ-2007»-ին մասնակցում էին հզոր ծայր ունեցող երգիչներ, սակայն նրանք չափանց մոլորվեցին եզրափակիչ փուլ, իսկ Սերբիայի հաղթանակը շատերի համար էր անսպասելի: Հայաստանի Հանրային հեռուստա-ընկերության գործադիր տնօրեն Արմեն Արզումանյանը նշեց, որ իրենք գոհ են արդյունքից, քանի որ շատ երկրներ մի քանի տարի մասնակցում են համաեվրոպական երգի այս մրցույթին, սակայն երբեք չեն հաղթել, նույնիսկ եզրափակիչ փուլ չեն անցել:

Ըստ Ա.Արզումանյանի, ինչպես 2006թ.-ին, այնպես էլ այս տարի Արևելյան Եվրոպայի և Սկանդինավյան երկրները Հայաստանի օգտին ծայր չեն տվել, ինչը անխուսափելի էր: «Իհարկե, չպետք է մոռանանք, որ մենք այդ մրցույթին մասնակցելու քիչ փորձ ունենք, բայց հույս ունենք, որ հետագայում ավելի բարձր տեղեր կգրավենք», - նշեց նա: Ի դեպ, ֆիննական կրգիներինց մեկը ֆինլանդահայերի նախաձեռնությամբ անվանվել է Հայկոյի անունով:

Ըստ Ա.Արզումանյանի, ինչպես 2006թ.-ին, այնպես էլ այս տարի Արևելյան Եվրոպայի և Սկանդինավյան երկրները Հայաստանի օգտին ծայր չեն տվել, ինչը անխուսափելի էր: «Իհարկե, չպետք է մոռանանք, որ մենք այդ մրցույթին մասնակցելու քիչ փորձ ունենք, բայց հույս ունենք, որ հետագայում ավելի բարձր տեղեր կգրավենք», - նշեց նա: Ի դեպ, ֆիննական կրգիներինց մեկը ֆինլանդահայերի նախաձեռնությամբ անվանվել է Հայկոյի անունով:

## Շրամայված է ծննդաբերել

ՀՅԴ-ն նպատակ է դրել հասնել նրան, որ երեք տարի անց Հայաստանի բնակչության թիվը հասնի 4 միլիոնի, մինչդեռ ըստ ՀՀԿ Մեթոյանցի, դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե յուրաքանչյուր վերարտադրողականության տարիքի կին տարեկան առնվազն մեկ երեխա ունենա:

ՀՅԴ-ն Գեղամ Մամուկյանին հրամայի լողի չեմպիոն դառնալ, կդառնա: Հուտով ենք՝ ՀՅԴ-ն Գեղամ Մամուկյանին չի հրամայի անձամբ ապահովել ծնելիության անձը:

«ՀԻ» - Դաշնակներն ակնհայտորեն Հայաստանը շփոթել են ճագարաբուծական ֆերմայի հետ: Երևի նրանց թվում է, թե հենց այսօրվանից Հայաստանի վերարտադրողական տարիքի տղամարդիկ և կանայք, բանուգործ թողած, պիտի շտապեն անշեղորեն կենսագործել ՀՅԴ ծրագրային հիմնադրույթները: Չնայած չի իմացվի: Սեկ էլ տեսար, ՀՅԴ-ն եկավ իշխանության և հրաման արձակեց, որ այսուհետ յուրաքանչյուր կին (անկախ տարիքից) պարտավոր է տարեկան առնվազն մեկ, իսկ ռազմական դրության ժամանակ՝ առնվազն երկու երեխա ունենալ: Հիշում եք, չէ՞, Կահան Հովհաննիսյանի խոսքը, չէ՞ «Եթե



## ՄԻ ՔԱՆԻ ՏՈՂՈՎ...

Պ- «Իրավաբանորեն, ԱՄՆ-ն մինչև հիմա չեն ճանաչել Թուրքիայի Հանրապետությունը: 1918 թվականին ԱՄՆ Սենատը գտել է, որ անհնարին է ճանաչել մի պետություն, որը չի կատարել ԱՄՆ նախագահի իրավաբար վճիռը»,- Երեվանում մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է արևելագետ, միջազգային իրավունքի մասնագետ և Կանադայում ՀՀ նախկին դեսպան Արա Պապյանը:

Պ- Ռոբերտ Քոչարյանը մայիսի 11-ին հրամանագիր է ստորագրել գեներալ-լեյտենանտ Սեյրան Օհանյանին ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ-պաշտպանության նախարարի առաջին տեղակալ նշանակելու և հինգ տարի ժամկետով պայմանագրի կնքելու մասին:

Պ- Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկադի Դուկասյանը պաշտպանության նոր նախարար է նշանակել Մովսես Հակոբյանին, որը մինչ այդ զբաղեցնում էր Ղարաբաղի զինուժի գլխավոր շտաբի պետի պաշտոնը:

Պ- Ըստ պաշտոնական տվյալների, Հայաստանում ամենաշատ աշխատակիցներ ունի «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն: Այստեղ աշխատում է 8 հազար 42 մարդ:

Պ- Պոլսո Հայոց պատրիարք Մեսրոպ Բ Մուրաֆյանը թուրքական «Ջանանին» տված հարցազրույցում հայտարարել է, որ Թուրքիայի հայերը պետք է ներկայացված լինեն այդ երկրի խորհրդարանում:

Պ- Ֆրանսիայի վարչապետ Ֆրանսուա Ֆիյոնի գլխավորությամբ ձևավորված կառավարության 15 հոգանոց կազմում նախարարական պորտֆելները բաշխվելու են 7 կանանց և 8 տղամարդկանց միջև:

Պ- Ֆրանսիացի սենատոր, Ֆրանս - կովկասյան բարեկամության խմբի նախագահ Ամբրուազ Դյուկոնը Բաքվում հայտարարել է, թե Հայոց ցեղասպանության ուրաջման համար քրեական պատիժ սահմանող օրինագիծը հանվել է Սենատի օրակարգից:

## 1 - «1915-ԻՆ ՍՊԱՆԿԱՑ ԸՆԴՈՒՄԻ ԹԻՎԸ Ց ԸՆԶԱՐ 5 ԸՆԴՈՒՄ Ե»

Հայտարարում է թուրքական պատմական ընկերության նախագահ Հալաջոլուն

Ապա ինքնըստինքյան վերանուն է ցեղասպանության մեղադրանքը:

Պետք է ասել, որ օսմանյան ռազմական այս ատյանը ստեղծվել էր ոչ թե 1915 թ.-ին, ինչպես ներկայացնում է պրոֆ. Հալաջոլուն, այլ 1919 թ.-ին Կ. Պոլսում հենց Հայոց Ցեղասպանության մեղավորներից բացահայտելու և պատժելու նպատակով:


Այլ կերպ, պրոֆ. Հալաջոլուն պատմական ճշմարտությունները խեղաթյուրելիս նաև ստում է: Ըստ երևույթին, նրա ստերը տարակուսանք են առաջացրել դաշիխոնում, որ կոնֆերանսի մասնակիցները հարցրել են. «Ինչո՞ւ են տեղահանվել հայերը, որոնց հետ գոյակցել էինք 850 տարի»: Հալաջոլուն այս հարցին պատասխանելիս ստերը համարել է խեղաթյուրման հետ և ասել. «Թուրքերին Անատոլիայից վտարելու համար գաղութատեր պետությունները օգտագործել են հայերին: Միսոնդական գործունեության հետևանքով, սկսած 1820-ական թթ., նրանք դարձել են բողոքական և կաթոլիկ: Հայերը կռվել են թուրքական 20 հազարանոց զորքի դեմ և ֆրանսիական բանակի կեսը տարածաշրջանում կազմում էին հայ կամավորները»:

# ՄՈՏ ԿԵՍ ՄԼՆ ԸՆՏՐՈՂ ԻՐ ԶԱՅՆՈՑ ԿԵՍԵԼ Է ՈՉ ԻՇԽԱՆԱԿՄԵՏ ՈՒՇԵՐԻՆ

## Մեծամասնություն կազմող 734-ն ստիպված է հաշվի նստել այս փաստի հետ

Ընտրությունների վերջնական արդյունքների վավերացումից հետո պատկերն այնպիսին է, ինչպես և նախնական արդյունքների ժամանակ՝ խորհրդարանի քարտեզն այն ժամանակ և հիմա էլ ամբողջացնում է 5 կուսակցություն: Վերջնական ճշգրտումներից և ԿԸՀ կողմից վավերացումից հետո էական փոփոխություններ չեն եղել նաև քվեների թվում: Ըստ վերջնական արդյունքի՝ ՀՀԿ-ն ստացել է 458 258, ԲՀԿ-ն՝ 204 483, ՀՅԳ-ն՝ 177 907, ՕԵԿ-ը՝ 95 324, «Ժառանգությունը»՝ 81 048 ձայն: Եթե վավեր 1 351 423 քվեներից հանենք վերը նշված կուսակցությունների մոտ մեկ միլիոնը, կստացվի, որ 330 000-ից ավելի քվե փոշիացրել են 5 տոկոսը չհասնող հարյուրավոր ընտրվածները, հատուկ փոշիացնելու նպատակով ստեղծված մի քանի հրատապ կուսակցություններ: Իսկ եթե այդ թվին ավելացնենք ՕԵԿ-ի և «Ժառանգության» ստացած ընդգրկվող քվեները, դուրս կգա մոտ կես միլիոնը, որը չի աստարտում իշխանամետ կուսակցություններին: Սա թիվ է, ընդ որում՝ այս ընտրողների մեջ չեն վարչական ուսուցիչի և գանազան շահագրգռությունների ազդեցությունը ընտրությունների գնացողները, ասել է, թե սրանք իսկական, ի սրտե ընտրողներն են: Այսինքն՝ մոտ կես միլիոն ընտրող դեմ է իրականացվող քաղաքականությունը, դժգոհ է իր կյանքից և կուղենար փոփոխություններ տեսնել երկրում: Սա մոտավորապես այն թիվն է, որը 1996-ին չստացավ Լևոն Տեր-Պետրոսյանը, և իր նախագահության հետագա ամիսներին այնքան էլ վստահ չէր զգում իրեն՝ մինչև «Հայտնի ուժերի ճնշման տակ» հրաժարականը: Այս թվի հետ հաշվի չհասնել չի կարելի, քանի որ իրեն չընտրող կես միլիոն քաղաքացու խնդիրները հավասարաչափ պետք է լուծի նույն կառավարությունը, աշխատելով դժգոհության վեկտորը նվազեցնել:

Թյուններին, ՀՀԿ նախագահական թեկնածուն կարող է ընտրվելիս դժվարություններ ունենալ: Անգամ եթե ընդգրկված չլինի շարունակի նույն ոգով, ինչ խորհրդարանական ընտրություններին էր՝ իր առաջնորդների ամբիջիների պատանդը մնա և մի տարր



նախագահացու առաջադրի՝ ինչն, իհարկե, հոգեբանորեն կնվազեցնի նրանց ընդգրկմանը էլեկտորալ, սակայն երկրորդ փուլի սպառնալիքը իշխանական նախագահացուի (-ների) միշտ կա, երբ տեսանկյունից չի բացառվում բոլոր ընդգրկվող թեկնածուների բացարկները հանուն մեկի: Ահա սա հիմնականից պետք է իշխանությունը դրամիանտ ուժերն աջքի առաջ ունենան՝ ապագա գործելակերպ կառուցելիս: Բոլոր դեպքերում բացասական լիցքերն այս ընտրություններին չպարպվեցին և մնացին կուսակցված, ու երբեք էլ որևէ իշխանություն չի կարող չահել իր ընտրողների հետ վարչական մեթոդների լեզվով խոսելիս: Բոլոր դեպքերում ապագա մեծամասնություն կազմող ՀՀԿ-ն ժամանակ ունի ընտրելու գործողությունների ամենից փափուկ և իրեն հետահար դիվիդենտներ բերող ձեռագիր, թեև մյուս իշխանական ուժերի՝ ԲՀԿ-ի և ՀՅԳ-ի պահվածքն էլ կարող է այս կամ այն գործելակերպի որդեգրմանը նպաստել:

Հետ նաև մականունավորներ և կասկածելի կրթության տեր մարդիկ, Վաղգեն Մանուկյանի ասած՝ «նախ՝ մականուն, հետո՝ Աժ» ձևաչափով: Խորհրդարան անցած 131 պատգամավորների մասնագիտական-կրթական-գործարարական ցենզը թողնելով ավելի ուշ, կառավարություն կազմելուց հետո ընկած ժամանակին, քանզի արդյունքում խորհրդարան կգա այս պահին խորհրդարան չանցած-համամասնական ցուցակների շարունակությունից պատգամավորների նոր «խմբաբանակ»՝ մի քանի ընդհանուր օրինաչափություն ընդգծենք:

Այսպես՝ 41 մեծամասնական տեղերը լրացնող պատգամավորներից 27-ը երրորդ գումարման պատգամավոր է, համամասնական ցուցակներից 32-ը նույնպես պատգամավորն էր ԿԸՀ-ի մանդատատերերից է. այսինքն՝ ներկա (դեռևս մի քանի օր) խորհրդարանի պատգամավորների մոտ կեսը վերաբերում է: Նոր խորհրդարան մուտք գործող կին պատգամավորների թիվը կրկնապատկվել է, ՀՀԿ-ից՝ 3-ը (առայժմ), ԲՀԿ-ից՝ 2-ը (առայժմ), ՀՅԳ-ից՝ 2-ը, ՕԵԿ-ից՝ 1-ը, «Ժառանգությունից»՝ 3-ը, ընդհանուր թվով՝ 11 կին պատգամավոր: Հիշեցնենք, որ ՀՀԿ-ից համամասնական կարգով խորհրդարան են անցել 41, մեծամասնական թվով՝ 25, ընդհանուր թվով՝ 66 պատգամավոր: Այդ թվին կավելանա 3-4 պատգամավոր՝ ՀՀԿ-ից աջակցություն ստացածները: «Բարգավաճ Հայաստանը» համամասնական թվով՝ 18, մեծամասնական թվով 7 (+1) է ունենալու: ՀՅԳ-ն 16 պատգամավորները համամասնական թվով են ընտրված, ՕԵԿ-ը՝ 8 համամասնական, 1 մեծամասնական, «Ժառանգությունը»՝ 7 համամասնական պատգամավոր ունեն: «Դաշինքը» ներկայացված կլինի 1 պատգամավորով՝ Մարտուն Գրիգորյան, ու հավանաբար 1981 թվականին ծնված, «Ավտոկայան ՓԲԸ» Գյումրու մասնաճյուղի տնօրենի տեղակալը կլինի նոր խորհրդարանի ամենաերիտասարդ անդամը, նրանից մի քանի տարի ավելի ավագ մեկ տասնյակի հասնող երիտասարդ պատգամավորներ կլինեն նոր խորհրդարանում, գերակշռելու է 45-60 տարեկան պատգամավորների թիվը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
«ԱԶԳ», 22.05.07

# Կուսակցության անդամներ և քվեարկություն

Բարգավաճ Հայաստան կուսակցությունը, ըստ իր իսկ տրամադրած տվյալների, ունի 370 հազար անդամ: Իսկ ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների, ԲՀԿ-ն ստացել է 204,443 ձայն:

«ԼՐԱԳԻՐ», 14.05.07:  
Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության, Միացյալ Մեծամասնությունի միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ «Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը հրապարակել է 37 Աժ մայիսի 12-ի ընտրություններին մասնակցող կուսակցությունների մասին տեղեկություններ, այդ թվում և՛ անդամների քանակը: Երբ համադրում են այս թվերը ԿԸՀ հրապարակած ընտրությունների նախնական արդյունքների հետ՝ բավականին արտառոտ պատկեր է ստացվում:

Բարգավաճ Հայաստան կուսակցությունը, ըստ իր իսկ տրամադրած տվյալների, ունի 370 հազար անդամ: Իսկ ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների, ԲՀԿ-ն ստացել է 204,443 ձայն: Ստացվում է, որ Բարգավաճ Հայաստանի ոչ բոլոր անդամներն են քվեարկել իրենց հարազատ կուսակցության օգտին: Հայաստանի երիտասարդական կուսակցությունը, դարձյալ ըստ իր իսկ տրամադրած տվյալների, ունի 7960 անդամ: Իսկ ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալների, այս կուսակցությունը ստացել է 2302 ձայն, կամ 364-ի օգտին է քվեարկել կուսակցության անդամներից ամեն երրորդը-չորրորդը:

Հայաստանի ժողովրդական կուսակցությունը, հայտարարել է, թե ունի 30,300 անդամ: Բայց ընտրություններում ստացել է 23,629 ձայն: Ստացվում է, որ 364-ականների մոտ 25 տոկոսը հարազատ կուսակցության օգտին չի քվեարկել: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը 20 հազար անդամ ունի, բայց ստացել է 8835 ձայն: Փաս-

տորեն, ի տարբերություն 364-ի, 370-ի օգտին է քվեարկել կոմունիստների ընդամենը 30 տոկոսից քիչ ավելին, մյուսները՝ այլ ուժերի, որոնց մեջ կոմունիստական գաղափարախոսություն դավանող չկա: Հայաստանի Մարքսիստական կուսակցությունը ունի 7500 անդամ: Ստացել է 2896 ձայն: Մարքսիստների դեպքում էլ կուսակցության անդամների 40 տոկոսն է քվեարկել հանուն սեփական գաղափարախոսության:

Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը ունի 4530 անդամ, բայց ստացել է 1033 ձայն: Ստացվում է, որ միայն յուրաքանչյուր չորրորդ հնչակյանն է ցանկացել, որ իր կուսակցությունը հայտնվի Աժ-ում:

Ընտրություններին մասնակցող մյուս կուսակցությունները ստացել են շատ ավելի քվե, քան ունեն անդամներ: Օրինակ, 370-ն միշտ հայտարարել է, որ ունի 7000 անդամ և 10 անգամ ավելի համակիր: Այլ խոսքով, 370-ն առավելագույնը նշածող պետք է լիներ 100,000-ի սահմաններում: 370-ն ստացել է 177,192 ձայն:

55 հազար անդամ ունեցող Հանրապետականը երբեք չի ասել, թե որքան համակիր ունի: Հանրապետականը ստացել է 457,032 քվե կամ պատկերավոր ասած՝ ամեն հանրապետական, բացի իր քվեից, ևս 8 ձայն է ապահովել հարազատ կուսակցության անդամներից ամեն երրորդը-չորրորդը: Հայտարարել է, թե ունի 30,300 անդամ: Բայց ընտրություններում ստացել է 23,629 ձայն: Ստացվում է, որ 364-ականների մոտ 25 տոկոսը հարազատ կուսակցության օգտին չի քվեարկել: Հայաստանի կոմունիստական կուսակցությունը 20 հազար անդամ ունի, բայց ստացել է 8835 ձայն: Փաս-



**Իլիև Ալին.**  
**«Հայկական կողմը ընդունում է փուլային տարբերակը»**  
Սերժ Սարգսյանն Ալիևի հայտարարության մասին.  
**«Թող խոսի՝ ինչ ցանկանում է, մենք արդեն հայտնել ենք մեր դիրքորոշումը»**

«ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ», Ռ/Գ. 04.05.07:  
«Հայկական կողմը համաձայնություն է տվել հակամարտության փուլային կարգավորմանը և Լեռնային Ղարաբաղի սահմանակցող բոլոր յոթ շրջաններից գործը առաջիկա տարիներին դուրս բերելուն», - «Թուրան» գործակալության փոխանցմամբ, հայտարարել է Ազրբեջանի նախագահ Իլ-

համ Ալիևը՝ Ռամանի գյուղում մասնակցելով փախստականների ավանի բացմանը:

«Ես հրապարակում եմ գաղտնի բանակցությունների բովանդակությունը, քանզի Հայկական կողմը փորձում է խեղաթյուրել ընթացող բանակցություններին և ձեռք բերված համաձայնությունների էությունը, մասնավորապես, պնդում է, թե կա համաձայնություն ընդամենը հինգ շրջանների ազատելու վերաբերյալ. դա իրականությունը չի համապատասխանում: Մեզ առաջարկել են այդպիսի տարբերակ, սակայն մենք այն մերժել ենք, և հիմա կա համաձայնություն հենց յոթ շրջանների մասին», - ասել է Իլհամ Ալիևը՝ հավելելով. - «Խորհրդարանական ընտրությունների նախօրեին Հայկական կողմն ապատեղեկացնում է հանրությունը, դրա համար էլ ես ստիպված եմ բացահայտել բանակցությունների էությունը»:

Նրա խոսքերով, «չըլաններն ազատելու ընթացքում այնտեղ կսկսեն վերադառնալ փախստականները, այդ գործընթացի ավարտից հետո սկսվելու է ազրբեջանական բնակչության վերադարձը Լեռնային Ղարաբաղ»:  
«Թուրան»-ի փոխանցմամբ, Ալիևն



ընդգծել է, որ «Հայաստանն ընդունել է այդ տարբերակը»:

Ազրբեջանի նախագահը ասել է նաև, որ «Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի ցամաքային կապը կիրականացվի Լաչինի միջանցքով»:  
Նրա խոսքերով, համաձայնություն կա հակամարտության գոտում միջազգային խաղաղարար ուժեր տեղակայելու շուրջ:  
«Մենք դեմ էինք, սակայն Հայերը

վախենում են, դրա համար էլ մենք համաձայնեցինք», - ասել է Ալիևը՝ նշելով, որ «խաղաղապահների տեղակայման ժամկետը սահմանափակված կլինի»:

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ Իլհամ Ալիևը ասել է, որ այն կճշտվի միայն փախստականների վերադարձից հետո և պետք է համապատասխանի Ազրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքին: Միաժամանակ, նա հայտնել է, որ «այդ ինքնավարության աստիճանը կլինի ավելի բարձր, քան այն, որ կար խորհրդային ժամանակաշրջանում»:  
«Ով անկախություն է ուզում՝ թող մեկնի Հայաստան», - հայտարարել է Ազրբեջանի նախագահը:

**Սերժ Սարգսյան.**  
**«Թող խոսի՝ ինչ ցանկանում է, մենք արդեն հայտնել ենք մեր դիրքորոշումը»**  
«PanARMENIAN.Net», 04.05.07:  
«Հայաստանը բազմաթիվ անգամներ հայտարարել է իր դիրքորոշումը, այն հստակ է և պարզ», - հայտարարել է



Հայաստանի վարչապետ Սերժ Սարգսյանը՝ մեկնաբանելով Ազրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հայտարարությունն այն մասին, որ «ընդհանուր համաձայնություն կա Ազրբեջանի 7 շրջանների, այդ թվում՝ Քելբաջարի և Լաչինի վերադարձի մասին»: Սերժ Սարգսյանը նշել է, որ չի պատկերացնում ինչ նպատակներ է հետապնդում Իլհամ Ալիևը նման հայտարարություններ անելով, իսկ եթե տեղեկանա, ապա «համապատասխան եզրահանգումներ կանի»:  
«Թող խոսի, ինչ ցանկանում է, մենք արդեն հայտնել ենք մեր դիրքորոշումը», - ամփոփել է նա, չեղով հարցազրույցի իր խոսքերը, հայտնում է Regnum-ը:

### «Մամուլի ազատությունը Հայաստանում սահմանափակված է»

Հայաստանում մարդու իրավունքների բնագավառում գրանցված որոշ բարեփոխումներին՝ մամուլի ազատությունը Հայաստանում սահմանափակված է, անկախ մամուլը գտնվում է ճնշման ներքո, հեռարձակվող մամուլն իշխանամետ է: Այս մասին ասված է Վիեննայում գործող Մամուլի միջազգային ինստիտուտի գեկույցի «Հայաստանին վերաբերող բաժնում»: Զեկույցում նշվում է, որ 2006 թվականին «Ա1+»-ի հեռարձակման լիցենզիան վերստին մերժվել է. 2002 թվականին եթերից զրկվելուց հետո այդ հեռուստաընկերությունը 11 անգամ դիմել է լիցենզիա ստանալու համար և ամեն անգամ մերժում է ստացել:



«Տպագիր մամուլը Հայաստանում ավելի բազմազան է, սակայն թերթերն ունեն ֆինանսական և տնտեսական խնդիրներ», - նշում է Մամուլի միջազգային ինստիտուտը:

«Ժամանակ երևան» անկախ պարբերականի խմբագիր Արման Բաբաջանյանին զինձառայությունից խուսա-

փելու մեղադրանքով 4 տարվա ազատազրկման դատապարտելու վճռի վերաբերյալ գեկույցում ասված է, որ մի շարք թերթեր և իրավապաշտպան կազմակերպություններ դատապարտել են այդ փաստը՝ պնդելով, թե լրագրողին ներկայացված մեղադրանքների հիմքում քաղաքական շարժառիթներ են, և «իշխանությունները վրեժ են լուծել Բաբաջանյանից» «Ժամանակ երևան»-ում կառավարությունը քննադատող նյութեր հրատարակելու համար»: Բաբաջանյանն էլ «ասել է, որ իր ձեռքարկությունն ազատակն է լուծել անկախ մամուլը, որը չի վախենում քննադատել իշխանություններին»:

Ինստիտուտը փաստել է, որ 2006 թվականը «ամենալայրագ և դաժան տարին էր լրագրողների համար». անցած տարի աշխարհում սպանվել է 100-ից ավելի լրագրող:

Լրագրողների համար ամենավտանգավոր երկիրը Իրաքն էր՝ այնտեղ սպանվել է 46 լրագրող:

### Հայաստանի ուսանողները բողոքում են կրթության որակի և կաշառակերության երևույթի դեմ

Մայիսի 4-ին Երևանի պետական համալսարանի և մի շարք այլ բուհերի ուսանողներ բողոքի ակցիա են անցկացրել ՀՀ կառավարության շենքի առջև՝ պահանջելով բարձրացնել կրթական համակարգի որակը և նվազեցնել կաշառակերության երևույթները:



բուհ ընդունվողների թիվը, քանի որ, ըստ նրա, ընդունելության քննությունների ժամանակ հայտարարված թիվը չի համապատասխանում ընդունվողների թվին:

Ըստ Կառվեն Խաչատրյանի՝ բողոքի համար ընտրվել է այս ժամանակահատվածը, քանի որ նախընտրական շրջան է, և ենթադրվում է, որ իրենց ձայնն ավելի լսելի կլինի:

Ուսանողներն իրենց պահանջները գրավոր ներկայացրել են ՀՀ վարչապետին: Իրանց լուծումը չտալու դեպքում ուսանողները կշարունակեն իրենց բողոքի ակցիան:

#### Ա.Ղուկասյան.

### «Մի հավատացեք հեքիաթներին, թե Քաշաթաղը կհանձնվի Ադրբեյջանին»

«Այսօր պատմական մար: Մենք իդուր չենք եկել այստեղ՝ փորձելով կրկնել հաղթական ուղին, որով անցել են մեր հերոս տղաները՝ ազատագրելով Շուշին, այնուհետև Լաչինը, այդպիսով միացնելով Հայաստանը Արցախին: Հավատարմացնում ենք, որ այս ճանապարհով մենք վստահորեն կանցնենք մինչև վերջ: Մի հավատացեք հեքիաթներին, թե Քաշաթաղը (նախկին Լաչին) կհանձնվի Ադրբեյջանին, դա տեղի չի ունենա: Մենք ազատագրել ենք այն՝ ոչ հանձնելու համար: Մենք պետք է վերականգնենք ու զարգացնենք Քաշաթաղը: Քաշաթաղը միշտ կլինի Արցախի ու Հայաստանի ուշադրության կենտրոնում: Մեր պարտքն է վերականգնել ազատագրված բոլոր հողերը», - մայիսին Լաչինի միջանցքի բացման 15-ամյակին նվիրված արարողությունը Հայտարարել է Լ.Ղ.Ն նախագահ Արկաղի Ղուկասյանը:



Միջոցառումներին մասնակցել են Հանրապետության և շրջանի ղեկավարությունն ու Հասարակայնության ներկայացուցիչներ:

Շարունակվող շրջափակման պայմաններում Լաչինի միջանցքը Լեռնային Ղարաբաղը Հայաստանին, իսկ նրա միջոցով՝ աշխարհին կապող միակ ճանապարհն է, որի բացման գործողությունը մասնակցել են Ինքնապաշտպանության ուժերի 2-րդ, 5-րդ և 6-րդ վաշտերը, Ղարաբաղի ու Հայաստանի կամավորական ջոկատները:

### «Թայմս»-ի հայազգի լրագրողը դատական գործընթաց է սկսել խմբագրի դեմ

«Թայմս» թերթի հայազգի լրագրող Մարկ Արաբյանը ազգային խտրականության մեղադրանքով դատական գործընթաց է սկսել նույն թերթի պատասխանատու խմբագիր Դուգլաս Ֆրենցի դեմ:



«California Courier» թերթի գլխավոր խմբագիր Հարոլդ Մասունյանն արդեն հանդիպել է «Թայմս»-ի հրատարակչի ու խմբագրի հետ՝ պահանջելով Ֆրենցիի հրաժարականը Թուրքիայի կողմից իրականացվող ուրացման արշավին մասնակցելու համար:

Վերջինս արդեն ասել է Արաբյանի՝ Հայոց ցեղասպանությունում մասին հորվածի հրապարակումը:

Խմբագիրն իր քայլը պատճառաբանել էր նրանով, որ Մարկ Արաբյանը էթնիկ ծագումը թույլ չի տա նրան այդ թեմայի վերաբերյալ անկողմնակալ լինել: Հատկանշական է նաև, որ Ֆրենցի-

### Ռամիլ Սաֆարովի ձակատագիրը որոշում է ոչ թե Հունգարիայի Արտաքին գործերի, այլ Արդարադատության նախարարությունը

Ցած բանտարկության դատապարտված Ռամիլ Սաֆարովի ձակատագիրը, ով Բուդապեշտում սպանել է հայկական բանակի սպա Գուրգեն Մարգարյանին, որոշում է Հունգարիայի արդարադատության նախարարությունը, այլ ոչ թե այդ երկրի ԱԳՆ-ն: Այդ մասին PanARMENIAN.Net-ի թղթագիրն հայտարարել է Բուդապեշտում անցած գործընթացում ՀՀ Պաշտպանության նախարարության ներկայացուցիչ, Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանը: «Ինչ վերաբերում է Բաբյովում հնչեցրած Հունգարիայի արտգործնախարարի հայտարարությանը, ապա այստեղ պետք է պարզել, թե որքանով է այդ տեղեկատվությունը համապատասխանում իրականությանը, որովհետև աղբյուրն անհավանական է: Երկրորդը, Հայկ Դեմոյանն ու Նազելի Վարդանյանը (Մարգարյանի ընտանիքի շահերը ներկայացնող փաստաբան) արել են հնարավոր ամեն ինչ, այժմ դիվանագետների հերթն է: Եթե Հունգարիայի ԱԳՆ ղեկավարի հայտարարությունը Սաֆարովի հնարավոր վերադարձի մասին ճիշտ է, ապա Հայաստանի ԱԳՆ-ն պետք է հանդես գա համապատասխան հայտարարությամբ», - ընդգծել է Դեմոյանը:



Նշենք, որ Հունգարիայի ԱԳՆ ղեկավար Կինգա Գենցը Բաբյովում հայտարարել է, որ Ռամիլ Սաֆարովի գործով դատական գործընթացը դեռ շարունակվում է և նրա վերադարձի մասին որոշումը կարելի է կայացնել գործընթացի ավարտից հետո:

### Նիկոլա Սարկոզին Ֆրանսիայի իշխող կուսակցության ղեկավարությունը հանձնել է Պատրիկ Դեշյանին

Ֆրանսիայի արդյունաբերության նախկին նախարար Պատրիկ Դեշյանը կգրավի «Ժողովրդական շարժման աջակցության միություն» կուսակցության (UMP) գլխավոր քարտուղարի պաշտոնը: Այդ պաշտոնը թափուր էր այն բանից հետո, երբ UMP-ն գլխավորող Նիկոլա Սարկոզին ընտրվել է Ֆրանսիայի նախագահ: Մայիսի 17-ին Դեշյանի հետ հանդիպմանը Սարկոզին նշել է, որ նրան է հանձնում կուսակցությունը և այդպիսով Դեշյանի վրա բարձր պատասխանատվություն է ընկնում: Սարկոզին նաև ցանկացել է, որպեսզի նա որքան հնարավոր է շուտ անցնի իր պարտականություններին, հարցրել է Regnum-ը՝ հղում կատարելով Հայաստանի Հանրային Հեռուստատեսությանը: Նշենք, որ Ֆրանսիայի նորընտիր

Հայկական բանակի սպա Գուրգեն Մարգարյանը վայրենաբար կացնահարվել է ադրբեյջանցի սպա Ռամիլ Սաֆարովի կողմից Բուդապեշտում 2004թ. փետրվարի 19-ին ՆԱՏՕ-ի դասընթացների օրերին: Ռամիլ Սաֆարովը մեղադրվել է Հունգարիայի ՔՕ 166.2 հոդվածով (սպանություն ծանրացուցիչ զանգամանքներով) և 2006 թվականի ապրիլի 13-ին դատապարտվել է ցմահ ազատազրկման՝ առաջին 30 տարվա ընթացքում առանց համաներման իրավունքի:

Նոր կառավարության կազմում 15 հոգի է, որոնցից յոթը կանայք: Մասնավորապես, ուղղման գերատեսչության նախկին ղեկավար Միշել Այո-Մարին նշանակվել է ներքին գործերի և արտասահմանյան տարածքների հարցով նախարար, արդարադատության նախարար է նշանակվել Ռաջիվ Դաթին: Արտգործնախարարի պաշտոնն ստացել է սոցիալիստ Բերնար Կուշները, պաշտպանության նախարար է դարձել Էրվե Մորերը:

## Չանագան

### Հայաստան ու Ադրբեյջանը՝ «համակարգչային գողության վարպետ»

Հայաստանը, Մոլդովան և Ադրբեյջանը, US Business Software Alliance կազմակերպության հրապարակած գեկույցի համաձայն, աշխարհում առանձնացել են համակարգչային ծրագրերի գողության: Զեկույցում նշվում է, որ այս երեք երկրներում 20 ծրագրերից միայն մեկն է թողարկվում օրինական ճանապարհով: Աշխարհի մակարդակով նախորդ տարվա կտրվածքով բոլոր համակարգիչներում տեղադրված ծրագրերի 35 տոկոսը եղել է անօրինական: «Ազատության» տեղեկացմամբ, համակարգչային ծրագրերի օրինականության տեսակետից «ամենապարտաճանաչ» երկրներն են Միացյալ Նահանգները, Նոր Զելանդիան և Ճապոնիան:

### Ամենախելացի թռչունը ազնավն է

Ճապոնացի գիտնականները եկել են այն եզրակացության, որ ազնավներն իրենց մտավոր կարողություններով զգալիորեն գերազանցում են այլ թռչուններին:

Պրոֆեսոր Էիտի Իսակայի գլխավորած խումբը, որը մի քանի տարի զբաղվել է ազնավի ուղեղի ուսումնասիրությամբ, այսօր հայտարարել է, որ ազնավի ուղեղի բաժինը մարմնի ընդհանուր քաշում շատ ավելի մեծ է, քան այլ թռչունների մոտ: Այն 2,5 անգամ ավելի մեծ է, քան արվամուկը:

«Կարելի է ենթադրել, որ մտավոր կարողություններով որոշ դեպքերում ազնավը չի զիջում շիմանգեբին», - եզրակացրել է Ճապոնացի պրոֆեսորը:

Մասնագետները վաղուց են նկատել, որ ազնավները գերազանց հիշողություն ունեն, կարողանում են խաբել և նույնիսկ պրիմիտիվ գործիքներ են օգտագործում:

### Աշխարհում կա 2,1 միլիարդ քրիստոնյա և 1,3 միլիարդ մահմեդական

Աշխարհում այժմ բնակվում է 2,1 միլիարդ քրիստոնյա և 1,3 միլիարդ մահմեդական: Այդ մասին հայտնել է «Ազնու» կրոնական գործակալությունը՝ վկայակոչելով ամերիկացի սոցիոլոգների տվյալները:

Քրիստոնյաներից 1,15 միլիարդը կաթոլիկ է: Երրորդ ամենատարածված կրոնը աշխարհում հինդուիզմն է: Աշխարհի բնակիչների 1,1 միլիարդը աթեիստներ, ագնոստիկներ և այլ «ոչ հավատացյալներ» են:

### Սլացիկության թիվ մեկ թշնամին

Ավելորդ քաշից տառապող կանանց սովորություններն ուսումնասիրելով՝ գիտնականներն հանգել են այն եզրակացության, որ երեք ժամ հեռուստացույցի առաջ անցկացնող կանայք 2,5 անգամ ավելի շատ են հակված գիրահայտելու և 50%-ով ավելացնում է շաքարախտով հիվանդանալու վտանգը: Դեռուստացույցի առաջ անցկացրած նույնիսկ 2 ժամը բավական է, որ, ինչպես վկայում են հետազոտողները, գիրահայտելու հավանականությունն աճի 25% ու, իսկ շաքարախտով հիվանդանալու վտանգը՝ 14%-ով: Նույն քաշային կարգը պահպանում են միայն այն կանայք, ովքեր հեռուստացույց են նայում 1 ժամից ոչ ավելի:

# Ռուսաց եկեղեցին միավորվեց, Ե՞րբ է հասնելու մեր հերթը...



Հետաքրքիր է, թե ի՞նչ են մտածում մեր զույգ Հայրապետները...



2007թ. մայիսի 17-ին, Մոսկվայում, անմոռանալի մի էջ բացվեց ռուս ժողովրդի նորագույն պատմության մեջ: Այդ օրը Ռուսաց Ուղղափառ եկեղեցու Հայրապետները, ստորագրելով միավորման փաստաթուղթ, վերջապես դրին 80-ամյա իրենց պառակտմանը: Իսկ ե՞րբ է հայ ժողովուրդը արժանանալու այդ բախտին:

Հայաստանյայց Առաքելական Ս. եկեղեցու երկու տարածքները անցնում է 50 տարի, պատրվակը՝ նույնը ինչ-որ ռուսական եկեղեցուն, իհարկե մի հիմնական տարբերությամբ, ինչպես երևանի «Զորորդ իշխանություն» թերթն է գրում «Ռուսները «Դաշնակցություն» չունենին»:

Հայաստանի անկախացումից և ի մասնավորի այն ժամանակվանից հետո, երբ ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի աջակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահին բազմեց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին առաջինը, հայ ժողովրդի զավակների սրտում բոցավառվեց հույսի ջահը և բոլորը սրտատրոփ սպասում էին մոտավոր միասնության: Սակայն հույսերը այն-

պես էլ չիրականացան, քանզի Ռաշնակ կուսակցությունը նույն օրերին, 1995թ. նոյեմբերին, իր 26-րդ Ընդհանուր ժողովում հայ եկեղեցու թեմային անդրադառնալով հույժ զաղտնի մի որոշում էր ընդունել, որի համաձայն կուսակցությունը պարտավորվում էր «Պաշտպանել Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության անկախությունը և խիստ վերապահությամբ մոտենալ թեմերի միացման գործին: Ամեն կերպ դեմ գնալ եկեղեցիների միացման կամ թեմերի վերաբաշխման հարցին»:

Ավելի ուշ, «Ամբիլիասի անկախությունը պահպանելու մտահոգությամբ» կուսակցության ոչ-հայաստառ մամուլում և Տանն Կիլիկիո ենթակա եկեղեցիներում, Ս. Պատարագի ժամանակ, Ամբիլիասի գահակալին շնորհեցին «ամենայն հայոց» տիտղոսը, որպեսզի «ամեն կերպ դեմ գնան» հայ եկեղեցու միասնականությանը:

Հետաքրքիր է, թե ի՞նչ են մտածում մեր զույգ Հայրապետները, որքանով են նրանք հետաքրքրված ԱԶԳԻ և ԵԿԵՂԵՑՈՒ միասնականությամբ: Ի վերջո, ե՞րբ է հասնելու մեր հերթը...

## «Լոյս»-ը վերադառնում է

Վերջերս, թեհրանում, շշուկներ է տարածվում այն մասին թե՛ շուտով վերահրատակվելու է «Լոյս» երկշաբաթաթերթը:

Հիշեցնենք, որ «Լոյս»-ի առաջին համարը հրատարակ է իջել 2000թ. մարտի 15-ին, իսկ նրա արտոնատեր և խմբագիր Էդիկ Բաղդասարյանի Կանադա գաղթելուց մեկ-երկու ամիս հետո, 2002թ. սեպտեմբերի 30-ին, հրատարակվել է վերջին համարն ու այնուհետ դադարել լույս տեսնելուց:

Շշուկներն ասում են թե է. Բաղդասարյանը մի քանի անգամ թեհրան է ժամանել և այդ ընթացքում համաձայնվել, պահելով թերթի արտոնությունը, նրա խմբագրությունը հանձնել մի ուրիշի:

Ինչևէ, պետք է սպասել և տեսնել: Ամենայնդեպս, մենք «Լոյս»-ի վերադարձը դրական ենք համարում և ողջունելի:

## Փերիո կրթասիրաց միություն

### Շահինշահի մասնաճյուղի երկամյա գործունեության զեկուցում

Փերիո կրթասիրաց միության Շահինշահի մասնաճյուղի ընդհանուր ժողովը կայացավ 16 նոյ. 2004թ., ուր ընտրվեց նոր վարչությունը ըստ հետևյալի.

Պրն. Ջանիկ Թահնազյան՝ նախագահ  
 Պրն. Կարո Թահնազյան՝ փոխ-նախագահ  
 Տկն. Արմին Թորոսյան՝ քարտուղար  
 Պրն. Սուրիկ Աղախանյան՝ հաշվապահ  
 Պրն. Ռաֆիկ Իսայան՝ խորհրդատու  
 Պրն. Արարատ Աղախանյան՝ գույքապահ  
 Պրն. Սարո Շահինիզյան՝ խորհրդատու

Միության նորընտիր վարչությունը իր առաջին իսկ նիստից միության մեջ աշխուժություն մտցնելու նպատակով պատրաստեց երկարատև և կարճատև ծրագրեր:

Երկարատև ծրագրում նախատեսվեց կազմակերպել մարզական և մշակութային խմբեր, որի համար կյանքի կոչեց մարզական և մշակութային միավորներ:

Մարզական միավորը իր աշխատանքը սկսեց 2005թ. հունիսից և կազմեց՝ ա-տղայոց բասկետբոլի խումբ, մարզիչ պրն. Այվն Սիմոնյան, բ-օրիորդաց բասկետբոլի խումբ, մարզիչ օր. Անգինե Աբրահամյան, գ- մանկա-պատանեկան ֆուտբոլի խմբեր, մարզիչ Մարտո Փափեյլան:

Բասկետբոլի տղայոց խումբը 2005թ. Սպահան նահանգի միջադաշնային մրցություններում գրավել է 3-րդ տեղը: Իսկ 2006թ. մասնակցել է Թեհրանի «Արարատ» միության նախաձեռնությամբ կազմակերպված Համահայկական խաղերին, որտեղ երիտասարդական բաժնում գրավել է 4-րդ տեղը:

# ՆՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲՆ ԱՅՍԵՂ ԳՎԱՐՈՂԱՑԱԿ ՊԱՅՄԱՆԵԼ ԻՐ ՄԻԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐՈՇ ԿՈՐՄԻ ՈՂՅԱՆՁՆԱՌՈՒ ՄՈՏԵՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ «ԱՐԱՔՍ»-Ը ՀԵՌԱՑԱԿ ՀԱՆՁՆԱԽՄԲԻՑ

Սույն թվի մայիսի 10-16-ը կայացավ ԹՀԹ Պատգամավորական ժողովի տարեկան նստաշրջանը, որի ընթացքում ժողովն ունկընտրեց, երկամյա ժամանակաշրջանը ավարտած, Կրոնական և Թեմական խորհուրդների ու ճակատակցության մասին զեկուցումները: Այնուհետ իրագործված աշխատանքների մասին ըթացավ որոշ քննարկում և տրվեց գնահատական:

Պատգամավորական ժողովն յոթնօրյա իր նիստերի վերջին օրը, որին իր մասնակցությունն էր բերել նաև Ներքին գործերի նախարարության ներկայացուցչը, հատկացրեց նոր մարմինների ընտրության:

- 5- Տ. Մետրոպ թին. Ռաբոտյան  
 6- Տ. Մաշտոց թին. Խաչատրյան  
 7- Տ. Կոմիտաս թին. Ղարախանյան
- բ- Թեմական խորհուրդ  
 1- Պրն. Եսիկ Տեր-Ստեփանյան  
 2- Պրն. Վահիկ Աղաքյան  
 3- Պրն. Արա Շահվերդյան  
 4- Դոկտ. Աղբա Հովհաննիսյան  
 5- Պրն. Թաթուլ Ետեղեղյան  
 6- Պրն. Համիկ Մարգարյան  
 7- Պրն. Վիգեն Գալստյան  
 8- Պրն. Հարություն Աբնուսյան  
 9- Տկն. Մարո Այվազյան  
 10- Պրն. Սևան Դանիելյան  
 11- Պրն. Արմավիր Մարգարյան

Հիշատակելի է, որ նորընտիր Թեմական խորհրդի կազմում ՀՀԳ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի եղբոր՝ Համիկ Մարգարյանի անդամակցությունը որոշների կողմից գնահատվում է որպես կուսակցության վերին մարմնի ակամոքի և ինչու չէ՞ նաև մտքի պարտադրման միջոց, նամանակամո, որ նորընտիր և մեկ շրջան առաջվա Թեմական խորհրդի նախագահուհի դոկտ. Արա Հովհաննիսյանի չափավոր և որոշ չափով ինքնուրույն մոտեցումները այնքան էլ դուրեկան չեն կարծրամիտ կուսակցականների համար:

Իսկ ինչ վերաբերում է ԹԽ-ում անկախ և ոչ-դաշնակցական կողմի ներկայությանը պետք է ասել, որ դժբախտաբար Միասնական հանձնախումբն այստեղ չկարողացավ պահպանել իր միակամությունը և որոշ կողմի ինքնազուլուխ, հակակազմակերպական և ոչհամաձեռն ընթացքի արդյունքում «Արաքս»-ը հեռացավ հանձնախմբից:

- Նորընտիր խորհուրդներն ու մարմնը.
- ա- Կրոնական խորհուրդ  
 1- Տ. Վարազդատ ավագ թին. Բեշիշյան  
 2- Տ. Արսեն թին. Ավետյան  
 3- Տ. Գուրգեն թին. Ներսիսյան  
 4- Տ. Վազգեն թին. Շամվոնյան

- գ- Հաշվեքննիչ մարմին  
 1- Պրն. Վահիկ Դառուսի  
 2- Պրն. Ռազմիկ Խաչատրյան  
 3- Պրն. Հայրուկ Մարտիրոսյան  
 4- Պրն. Մասիս Մկրտումյան  
 5- Պրն. Հենրի Ջուլիան  
 6- Պրն. Նելսոն Վարդանյան  
 7- Պրն. Թադե Տեր-Հարությունյան

# ՀԱՅՐԵՐԻ ՕՐԸ ՀԲԸՍ-ՈՒՄ

Ամեն տարի, հունիսին, Հայ բարեգործական ընդհանուր միության Կանանց բաժանմունքը նախաձեռնում է մի գեղեցիկ ձեռնարկ-ճաշկերույթ, որը նվիրված է հայրերին, ուր նաև մեծարվում է օրվա հայրը և ստանում պատշաճ նվեր:

Հայրերի մեծարման օրը, որը վերապահված է ՀԲԸ միության, այս տարի բացառաբար տոնվեց մայիսի 25-ին, միության մշակութային տանը, որտեղ ներկա էին միության կենտրոնական վարչությունը, հյուրեր, միության բարեկամները և անդամ-ուսուհիներ:

Օրվա առիթով խոսք առավ Կանանց բաժանմունքի նախագահուհի

«Այսօր երբ տոնում ենք հայրերի օրը, նշանակում է նաև, որ տոնում ենք մեր տան, ընտանիքի, հայրենիքի և բազում հայրերի արյունով ազատված Արցախի տոնը» - ասաց Ա. Բաբայանը և իր խոսքը փակեց. «Փառք ընտանիք ու հայրենիք կերտող հայրերին» և «Փառք հայրենիքի պատիվը պաշտպանող հայրերին» լուզուկներով:


Հիշատակելի է, որ այս տարվա ձեռնարկը հանձինս Դրո Բարսեղյանի ղեկավարությամբ գործող աշխույժ նվագախմբի, տարբեր երաժիշկներից և սրահում ստեղծվել էր ավելի ջերմ ու հարազատ մթնոլորտ: Մատենարո Արմեն Ասատրյանի և կիտառիստ Էռնեստ Գարանյանի համատեղ երաժշտությունը և Դրոյի ծայրը հիանալի լրացնում էին իրար: Նրանց հոգեպարար կատարումները կատարյալ խնդություն էր պարզապես ներկայաներին:

Իսկ ժոզեֆ Ամիրյանի ասումընքն ու



ապացուցեցին, որ ձեռնարկը հասել է իր նպատակին՝ հայրերին վայել ծրագիր կազմակերպելուն:

Ճաշկերույթը ավարտվեց կեսօրից հետո ժամը 4-ին և ներկայները, բարձր տրամադրությամբ, լքեցին ՀԲԸՍ-ի սրահը:



տազրված Արցախի տոնը» - ասաց Ա. Բաբայանը և իր խոսքը փակեց. «Փառք ընտանիք ու հայրենիք կերտող հայրերին» և «Փառք հայրենիքի պատիվը պաշտպանող հայրերին» լուզուկներով:

Հիշատակելի է, որ այս տարվա ձեռնարկը հանձինս Դրո Բարսեղյանի ղեկավարությամբ գործող աշխույժ նվագախմբի, տարբեր երաժիշկներից և սրահում ստեղծվել էր ավելի ջերմ ու հարազատ մթնոլորտ: Մատենարո Արմեն Ասատրյանի և կիտառիստ Էռնեստ Գարանյանի համատեղ երաժշտությունը և Դրոյի ծայրը հիանալի լրացնում էին իրար: Նրանց հոգեպարար կատարումները կատարյալ խնդություն էր պարզապես ներկայաներին:

Իսկ ժոզեֆ Ամիրյանի ասումընքն ու



Տղայոց և օրիորդաց բասկետբոլի խմբերը 2005, 2006 և 2007թթ. մասնակցելով Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, Շահինշահում, կազմակերպված մրցություններին, գրավել են պատվավոր առաջին տեղը:

Նույն խմբերը 2006 և 2007թթ. մասնակցել են Նոր Ջուլա-յի «Արարատ» միության կողմից կազմակերպված գարնանային մրցություններին:


Բոլոր ձեռնարկներում իր աշխույժ մասնակցությունն է բերել նաև Կարի

ՍՏՏՏՏՏ ՕժՏՏՏՏՏՏՏՏՏՏՏՏ

ԱՅՐԹ Թեմական խորհրդից

10,000,000 ռ.
ՓԿՄ կենտրոնական վարչությունից
5,000,000 ռ.
պրն. Ազատ Մաթյանից
1,500,000 ռ.
պրն. Արարատ Աղախանյանից
2,000,000 ռ.
պրն. Լևոն Սիմոնյանից
1,000,000 ռ.
պրն. Հայրո Բեշիշյանից
500,000 ռ.
պրն. Մասիս Հոսեփյանից
500,000 ռ.
պրն. Ռաֆիկ Թահնազյանից (Թեհրան)
1,500,000 ռ.
պրն. Հրաչ Շիրվանյանից
500,000 ռ.
պրն. Միկո Գալուստյանից
500,000 ռ.
պրն. Արսեն Ասատրյանից
350,000 ռ.

# ԱՆՆԱԽԱԴԵՊ ՉԵՌՆԱՐԿ



**Պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյանը** ելույթի ժամանակ

## **ՀԱՏՎԱԾՆԵՐ ՊՐՈՖ. Ա. ՍԱՖԱՐՅԱՆԻ ԵԼՈՒՅՈՒՆԵՐԻՑ**

- Աղոթում եմ առ Աստված, որ իմ որդին և դուստրը, որ դեռ շատ փոքր են, մեծանան նույնքան հայեցի, նույնքան ոգեղեն և նույնքան իմաստուն, որքան ձեր զավակները, որոնց ելույթը մենք ակամատես և ակաջալուր եղանք մի քանի րոպե առաջ:

- Հիրավի հայ համեստ դասախոսի և գիտաշխատողի համար շատ հուզիչ է տեսնել հայրենիքից հեռու, բայց և մոտիկ այսքան հայեցի մի համայնք, և այսքան հայեցի մի լսարան համախմբված, կուռ, միասնական և սեփական պետության, սեփական ժողովրդի իղծերով այդքան տոգորված:

- Հուզիչ է նաև խոսել լուսահոգի ընկերոջս Հրանտ Դինքի մասին: Բազմիցս առիթ եմ ունեցել Հրանտի հետ զրուցելու, մեր ազգային ճակատագրի, կենդանու խնդիրների մասին թե՛ Պոլսում, թե Երևանում, և անգամ ինքնաթիռում, առիթ եմ ունեցել միասին թռչել Երևանից Պոլիս և Պոլսից Երևան:

- Իհարկե Հրանտ Դինքը ռոմանտիկ էր, սա պետք է հասկանալ, նա լավատես էր, բայց նրան էր վիճակվել դառնալու Հայոց ցեղասպանության 1,500,000 և նա մեկ նահատակը: Այդպես է, որովհետև ի վերջո անկախ նրանից, թե ովքեր էին նրա սպանության իրական կազմակերպիչները և կատարողները, Դինքը Հայոց ցեղասպանության ժխտման նահատակ է, դա շատ կարևոր հանգամանք է, որպեսզի մենք հասկանանք նրա կերպարը ոգեկոչելու այս երեկոյին:

**Միասնական հանձնախմբի անունից, վերոհիշյալ ձեռնարկներին մասնակցելու հրավեր էր առաքվել այսպես կոչված «ազգային իշխանության» ու թեմիս Առաջնորդին, սակայն դժբախտաբար, ոչ մի արձագանգ, ոչ ոք չեկավ, բոլորը զբաղված էին, Առաջնորդից դժնաբան:**

- Անշուշտ Հրանտ Դինքի իղծերը կապված էին հաշտեցման իղեկների հետ, սակայն արդյո՞ք այսօր թուրքական պետությունը պատրաստ է այդ հաշտեցմանը:  
Ինչպես գիտեք, նախկին խորհրդային միության փլուզումից հետո, Հայաստանի Հանրապետության հռչակման իսկ օրից, անմիջապես Թուրքիան ճանաչեց Հայաստանի պետականությունը, բայց դիվանագիտական

հարաբերություններ այդպես էլ չհաստատվեցին:

Հայաստանի Հանրապետության առաջին, ինչպես և ներկայիս նախագահները, փաստորեն արտահայտեցին կամքը հաստատել հայ-թուրքական դիվանագիտական հարաբերություններ և նորմալացնել այդ հարաբերությունները, առանց որևէ նախապայմանի: Սա միջազգային պրակտիկայի տեսանկյունից հնարավոր միակ պրագմատիկ մոտեցումն է, բայց, ինչպես գիտեք, նախապայմաններ են առաջադրվում Թուրքիայի կողմից, որոնք ձեռք հայտնի են:

- Կան պարտվողական տրամադրություններ նաև Հայաստանում, թեև գերակշռող չեն: Այդ մարդկանց կուզենայի ասել, որ գիշումներ անելով թուրքական կողմին նախապայմանների հարցում մենք որևէ բան չենք շահելու, որովհետև չիստալով հայոց ցեղասպանության մասին մենք ամենակին երաշխիքներ չենք ձեռք բերում հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման հարցում, այլ միանգամայն ընդհակառակը, եթե ի վերջո հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գիծը լինելու է Արցախը, ապա սա թե Հայաստանի Հանրապետության ժողովրդի և թե համայն հայության համար, կարծում եմ միանգամայն անընդունելի է: Սա ակնհայտ է, և անկախ քաղաքական կորուկտուրայից, անկախ կու-

**եթե հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման գիծը լինելու է Արցախը, ապա սա թե Հայաստանի Հանրապետության ժողովրդի և թե համայն հայության համար, կարծում եմ միանգամայն անընդունելի է:**



**ՀՀ լիազոր և արտակարգ դեսպան** պրն. Կարեն Նազարյան

սակցությունների ապագա խորհրդարանում գրաված դիրքից, անկախ ապագա նախագահական ընտրություններից: Ես չեմ կարծում, որ կգտնվի որևէ քաղաքական ուժ, որը կարող է հարցականի տակ դնել արցախահայության ազատ ինքնորոշման իրավունքը. սա պետք է հասկանալ հայ-թուրքական և հայ-արգրբեջանական հարաբերությունների կառուցման մեթոդաբանության տեսանկյունից:

- Գալով հայ-թուրքական հարաբերություններին, դրանք այսօր դիվանագիտական մակարդակով փաստորեն գոյություն չունեն, գոյություն ունեն ամերիկացիները և որոշակի կոնտակտներ և անգամ գոյություն ունի ստատիստիկա ամերիկացիները, սակայն հարաբերությունների, ապրանքափոխանակության մասին: Որ-

քանով է սա նպաստավոր Հայաստանի տնտեսության համար: Բավական դժվար է ասել: Իրականում, մի կողմից Հայաստանի շրջափակումը սահմանափակում է հնարավորությունները երկարաժամկետ օգտագործել և վնաս է հասցնում մեր տնտեսության հետագա դինամիկային, բայց մյուս կողմից առաջիկա տարիներին ես նույնպես կասկած չունեմ, որ այդ շրջափակման և Հայաստանի պարտադրելու քաղաքականությունը, որը փորձում են թուրքական հասարակական, քաղաքական բարձր շրջանակները և թուրքական պետությունը պարտադրել Հայաստանին ձայնող-



**Ազից երրորդը «Ռաֆֆի» համալիրի նախագահի դուկտ. Ռուբեն Սարգսյան, չորրորդը՝ ՀՀ լիազոր և արտակարգ դեսպան պրն. Կարեն Նազարյան**

վելու է ձայնողվելու է, որովհետև վերջին տարիների Հայաստանի Հանրապետությունում գրանցվում է կայուն և զգալի տնտեսական աճ, որը արտահայտվում է երկնիչ թվերով: Այլ հարց է, որ այդ տնտեսական զարգացման արդյունքներից դեռևս հասարակության բոլոր խավերը չէ, որ օգտվում են, այլ հարց է, որ Հայաստանում, այո, կա տնտեսական արդյունքի, համախառն ներքին արդյունքի, բաշխման զգալի բեռնվածություն և այդ պարզեցման մասին Հայաստանյան քաղաքական ուժերը թե՛ իշխանաժողով, թե՛ ընդդիմադիր բացեիքաց խոսում են և մենք հասկանում ենք, որ սա մեր հասարակության առավել ցավոտ կողմն է և անկախ նրանից, թե ապագա, հաջորդ տարի սպասվող, նախագահական ընտրություններից Հայաստանի գործադիր և օրենսդիր իշխանության առաջ կանգնած ամենալուրջ հարցերից մեկը, հենց սա է լինելու, որովհետև ազգային միասնականությունը ենթադրում է նաև համագործակցություն, սոցիալական համագործակցություն:

- Ես չեմ ուզում զուտ խոսել ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման մասին: Փառք Աստծո, այսօր հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը Հայաստանի պետականության քաղաքական գերակայությունների մեջ է: Այն ժամանակ, երբ նշվում էր հայոց ցեղասպանության 90-ամյակը ես ինչ-որ կերպ զգայական ոգևորություն ապրեցի, որովհետև առաջին անգամ տեսա մեր համեստ գիտաշխատողների թիկունքում կանգնած հայոց պետականությունը:

- Ըստ ելույթի մենք միշտ ունեցել ենք բավական լուրջ ակադեմիական պոտենցիալ, նաև ցեղասպանագիտության, հայագիտության, քաղաքական հայագիտության ասպարեզում, սակայն որն է մեր ամենաթույլ կողմը այս ճակատում դա մեր համակարգվածության պակասն է:

- Երբ «Հայոց մեծ եղեռն» ժողովածուն ուզում էինք հրատարակել, խնդիր ծագեց թե՛ ի՞նչ կոլեկտիվով անել այս գործը և ահավասիկ այն ժամանակ, երբ մեր գիտնականները, ընդ-

որում խոսքը վերաբերում է ոչ միայն Երևանի պետական համալսարանին, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի տարբեր ինստիտուտներին, Երևանի տարբեր պետական և ոչ պետական բուհերին, այլև սփյուռքի կառույցներին, եկանք մի եզրակացության, որ այսպիսի ժողովածուի հրատարակումը պետք է բարձր լինի ներկուսակցական շահերից և միջկուսակցական հակասություններից:

- Դժբախտաբար մենք տեսնում ենք, որ հայ ցեղասպանության ճանաչման գործընթացում, որը ինստի-



տուցիոնալ մակարդակով կարծիքներ, փորձում են իրենց վերապահել բացառիկ իրավունք, ինչ-ինչ հարցերի մասին խոսելու, որը միանգամայն շահեկան չէ մեր ազգային խնդիրները նեկայացնելու և լուծելու տեսանկյունից, որովհետև չպիտի խառնենք երկու բան՝ միջկուսակցական, կուսակցական խնդիրները և համազգային խնդիրները:

- Ցանկացած դեպքում, երբ համազգային խնդիրները դնում ենք միասնաբար, կարողանում ենք նաև որոշակի լուծումներ ընդունել, իսկ երբ ընկնում ենք հակասությունների գիրկը ունենում ենք լուրջ խնդիրներ:

- Պետք է ոգևորությամբ հիշատակենք, որ «Հայոց մեծ եղեռն» ժողովա-

**Հարություն Քեչիշյան. «Միասնական հանձնախումբը նպատակ ունի հանդես գալ ոչ միայն պարագայաբար, ասենք Ապրիլ 24-ի կամ այլ առիթներով, այլ պետք է աշխատենք համայնքում ստեղծել միասնական աշխատելու ոգի, այն ինչի պակասը վերջին 30 տարվա ընթացքում շատ է նեղացրել մեզ»:**



**Չախից Միասնական հանձնախմբի նախագահ պրն. Հարություն Քեչիշյան, պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան, թերթիս խմբագիր պրն. Մովսես Քեչիշյան**

ծուի հրատարակման շնորհիվ, մենք ունեցանք մի ժողովածու, որը թե բազմակողմանիությամբ, թե տարողունակությամբ և թե խորության առումով որոշակի հիմք է ստեղծում ապագա ուսումնասիրողների համար:

- Գիտությունների ազգային ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի և մեր մյուս ինստիտուտների, ինչպես նաև ԵՊՀ-ի ջանքերով լույս է տեսնում թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ մատենաշար: Վերջերս լույս է տեսել մատենաշարի 6-րդ հատորը, որտեղ նույնպես ներկայացվում է Հայոց Ցեղասպանության վերաբերյալ լուրջ ակադեմիական ուսումնասիրություններ:

- Մեր ամբիոնում փաստորեն առաջին անգամ հնարավոր եղավ թուրքերեն լեզու և գրականություն մասնագիտացումներով բարձրագույն որակավորմամբ կադրերի պատրաստումը, Հայաստանի նորակապի պետականության մեջ: Նախկինում մասնակադրեր պատրաստվում էին Ռուսաստանում, հիմնականում Մոսկվայում և Լենինգրադում:

- Խորհրդային Միության փլուզումից հետո կադրերի արտահոսքի և բնական սերնդափոխության արդյունքում Հայաստանում ստեղծվեց մի այնպիսի իրավիճակ, որ մեր մասնագիտությամբ դոկտորի աստիճան ստացած մադկանց կարելի էր մեկ ձեռքի մատների վրա հաշվել:  
Ներկայումս մենք լուրջ մասնագետներ ենք պատրաստում և թուրքագիտության և թուրքերեն լեզվի, Թուրքիայի պատմության և աղբյուրագիտության ասպարեզներում:

- Առաջին անգամ արևելահայ իրականության մեջ, ցավով եմ ասում և զարմանքով, բայց և բացատրվող զարմանքով, Երևանի պետական համալսարանում մենք ձեռնամուխ եղանք թուրքերեն լեզվի դասագրքի ստեղծմանը և այդ դասագրքի առաջին հատորը արդեն իսկ ունի երեք հրատարակություն: Չարմանալիորեն հայաստանյան իրականության մեջ թուրքերեն դասագրքը չէիք գտնի և այդ հազարամյա պորբեմները, որ մենք ունենք թուրքերի հետ և թուրքական պետականության հետ ինքնին թելադրում էին մնալ դասագրքի ստեղծման կարևորությունը:

Արևմտահայ իրականության մեջ դա միանգամայն բացատրելի է որովհետև այնտեղ թուրքերենին տիրապետում էին և դրա անհրաժեշտու-

քում ստեղծվեց բառահատոր դասագիրք: Ի դեպ տեղին է խորհն երախտագիտությանը հիշել, որ դասագրքի առաջին գրախոսությունը տպել է «Ակոս» շաբաթաթերթը և լուսահոգի Հրանդ Դինքը, ինքը կազմակերպեց նաև այդ գրքի շնորհահոգեւր Պոլտուն:

- Հիմա եթե խոսում ենք հայ թուրքագիտության արդի վիճակի մասին, լինի դա Հայաստանում, թե սփյուռքում պիտի խոսենք մեր ամենամուրթ պորբլեմի մասին: Իմ կարծիքով մեր ամենամեծ և լուրջ պորբլեմն այսօր ֆինանսականը է: Ամենալուրջ մեր պորբլեմը շարունակում է մնալ կորդիմացիայի խնդիրը: Մենք գործում ենք հաճախ անտեղյակ մեկս մյուսի կատարած գործերից: Այլ հարց է, երբ դա կառավարական հանձնաժողովի մակարդակով էր կորդիմացվում և իսկապես այն ընկերները, որոնք մասնակցել են այդ միջոցառումներին երևի թե կկիսեին ին ոգևորությունը, երբ մենք զգում էինք պետության

- Մեր գիտական պարբերականների խմբագրական խորհուրդներում շատ հաճախ կարող եք տեսնել այլազգի վաստակաշատ հայագետների, Եվրոպայից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից և այլն: Բայց դժբախտաբար մեր սփյուռքահայ մտավորականները շատ քիչ են ներկայացված հայաստանյան գիտական պարբերականներին և մատենաշարի խմբագրականներում, այսինքն՝ նրանք հնարավորություն չունեն այն ինչ գեներացվում է սփյուռքում ներկայացնել հայաստանյան ընթերցողին:

Սփյուռքահայ մեր գիտնականները, գրողները, հրապարկախոսները Հայաստանում նույնպես զգալիորեն տպագրվում են, բայց որքանով են մեր պարբերականներում և մատենաշարերում նրանք ներկայացված:

- Բախտ են ունեցել լինելու տասնյակ երկրներում և անպայման ուր էլ որ եղել են, որպես հայ մարդ բնական է, այցելել են հայկական դպրոց: Խիստ ոգևորված են, որ մի տեղում



ՀՀ դեսպանատանը

Ճախից՝ «Ռաֆֆի» համալիրի պատվո նախագահ պրն. Պետրոս Աբգարյան, ՀՀ լիազոր և արտակարգ դեսպան պրն. Կարեն Նազարյան, Միասնական հանձնախմբի ղեկավարի անդամներ պրն. պրն. Աշոտ Սինանյան, Հայկ Թահմասյան, Հարություն Քեչիշյան, պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան

ուժեղ առկայությունը մեր թիկունքին: Մեր ամենօրյա աշխատանքում մենք պետք է ունենանք գիտական կորդիմացիա: Ահավասիկ սա այն լուրջ խնդիրներից մեկն է, որ կանգնում է թե թուրքագետների և թե ընդհանրապես քաղաքական հայագիտության առջև:

- Անկեղծ ասած իմ Պարսկաստան գալու նպատակներից մեկը այստեղի մեր գործընկերների հետ կոնտակտներն էին: Այստեղ մենք ունենք շատ լուրջ պոտենցիալ:

Հայաստանում բավական լավ գիտեն մեր իրանահայ մտավորականներին և նրանց վաստակը: Բայց միշտ չէ, որ հայաստանյան և իրանահայ և ինչու ոչ հայաստանյան և սփյուռքահայ գիտնականները իսկապես կորդիմացված գործելու հնարավորություն ունեն:

հնարավոր է այդքան հայերի հանդիպել, սա անշուշտ ուրախացնող համազամանք է:

- Ինչն են տեսնում բացասական այստեղ, դա արտահոսքն է դեպի արևմտյան Եվրոպա և Ամերիկա:

- Եթե պիտի լինի արտահոսք այնպիսի գաղութից, ինչպիսին իրանահայ գաղութն է, ապա այդ արտահոսքը, իրականում պիտի լինի ներհոսք, այսինքն՝ ներգաղթ դեպի Հայաստան: Այստեղ դարերով մշակված հայերի հայապահպանության աղապատացի ու մեխանիզմը կան, հայապահպանության ուժեղ շունչ կա:

- Դժբախտաբար երբ այցելում ենք Արևմտյան Եվրոպայի մեր գաղթօջախները տեսնում ենք, ուժացման

**ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀՀ ԼԻԱԶՈՐ ԵՎ ԱՐՏԱՎԱՐԳ ԴԵՄՊԱՆ ՊՐՆ. ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐԻԱՆԻ ԵԼՈՒՅԹԻՑ**

- Ցանկանում են շնորհակալություն հայտնել իրանահայ բոլոր միություններին և մեր ժողովրդին, հատկապես երիտասարդությանը, միջոցառումներին իրենց ակտիվ մասնակցության համար, որովհետև, պարտքի, պահանջատիրության և զգացմունքների արտահայտման հետ մեկտեղ, իրանահայ համայնքը ոգեկոչելով համաշխարհային պատմության այս ամոթալի օրը, իր առանձնակի ներդրումն է ունենում առհասարակ ցեղասպանության կանխարգելման և դատապարտման և մասնավորապես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում:

- Գնահատելի է, որ այս օրերին Հայաստանից իրանահայ համայնքում են գտնվում տարբեր հյուրեր, գիտնականներ, արվեստագետներ, ինչը խորհրդանշում է, որ Հայաստանը և Սփյուռքը հանդես են գալիս միասնաբար, բողոքելու ու դատա-

պարտելու համար Հայոց ցեղասպանության ոճրագործերի բռնարարը և նրանց կողմից այսօր էլ շարունակվող մերժողական կեցվածքը:

- Լսելով դուրս. Սաֆարյանի դատախոսությունը, ինչպես նաև մշակութային, համերգային ծրագրերը, մենք կարծես, մտովի մի պահ տեղափոխվում ենք դեպի մեր պատմական հայրենիքը, շրջում ենք նրա լքված գյուղերով, քաղաքներով և մեր բոլորի ցանկությունն է, որ մոտ ապագայում տարածաշրջանային զարգացումների բերումով այդ ճամբորդությունը իրականություն դառնա, որպեսզի մեր ժողովուրդը և բոլոր խաղաղասեր ժողովուրդները կարողանան հրապուրվել ու վայելել, Արևմտյան Հայաստանում մեր կողմից ստեղծված և այսօրվա քաղաքակիրթ աշխարհին ժառանգություն բողոք, մեր պատմամշակութային գոհարները, որոնք թուրքա-

բավական բարձր տեմպեր, իհարկե, այնտեղ նույնպես մենք ունենք նվիրյալ մտավորականներ, որոնք գերմանական ճիգերով փորձում են պահպանել հայությունը, շարունակել հայապահպանությունը:

- Թուրք ազգայնականները, այն մարդիկ, որոնք պատրաստ չեն դեռևս ճանաչել հայոց պետականությունը, միաժամանակ ընդգծում են, որ հայոց սփյուռքը մեր պոտենցիալն է և հասկանում են, որ դա լուրջ ռեսուրս, լուրջ հենարան է հայության մեջքին:

- Այսօրվա կտրվածքով Հայաստանը առանձին որպես պետություն, Հայաստանը և Սփյուռքը միասին դրանք բոլորովին տարբեր քաջային կատեգորիաներ, տարբեր արժեքային համակարգեր են:

Հայաստանը դա օրօրի կայացող ժողովրդավարություն է, օրօրի կայացող պետություն, բայց Հայաստանը և Սփյուռքը միասին դա Եվրոպական և միջազգային քաղաքականության լուրջ գործոնի հավակնող մի համակարգ է:

Այսօր սփյուռքը կա և այն Հայաստանի համար մեծ ռեսուրս է: Մենք բոլորս պիտի ձգտենք, որ հայոց պետականությունը, այնքան անրապնդվի, որ աստիճանաբար կարողանա օգնել սփյուռքին տարաբնույթ ասպարեզներում:

- Հայ ժողովրդի իրական հենարանը հայոց երկու պետականություններն են: առաջինը՝ Հայաստանի Հանրապետությունը, որն այսօր աշխարհում ճանաչված է և բոլոր հնարավոր միջազգային կազմակերպություններում իր արժանավոր տեղն է զբաղեցնում և հայոց երկրորդ պետականությունը՝ Արցախի պետականությունը, որն անտարակույս, նույնպես մի օր ճանաչվելու է միջազգային շրջանակներում, աստիճանաբար, ցավոտ, բայց անպայման ճանաչվելու է: Այս երկու պետականությունները կանգնելու են Սփյուռքի մեջքին:

- Անշուշտ, հայոց ցեղասպանությունը հայոց սփյուռքը միավորող գործոնն է: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը հայոց պետականության անվտանգության լուրջ երաշխիք է դառնում: Որևէ կասկած չունեն, որ Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսը և Սենատը անպայման ճանաչելու են հայոց ցեղասպանությունը, որ Եվրոմիության բոլոր երկրները ճանաչելու են: Որպես լավատես մարդ, փորձում են հավատալ նաև, որ Թուրքիան նույնպես ճանաչելու է: Այս մասին բազմիցս առիթ են ունեցել խոսել Ստամբուլում և Անկարայում, թուրքական լրատվամիջոցների առաջ: Սա նաև թուրք ժողովրդի բարոյական մաքրագործման խնդիրն է, որովհետև թուրքական պետությունը չի կարող թու-

կան քաղաքականության պատճառով մատչելի չեն շատ-շատերի համար, կամ էլ աղավաղված են ներկայացվում:

- Ապրիլյան ծեղանարկները առիթ են մեզ համար ևս մեկ անգամ վերագնահատելու մեր անցած ճանապարհը: Այնպիսի մեր մտքերի ու մտորումների հետ մեկտեղ, մենք պարտավոր ենք ապրիլյան այս օրերին, հերթական անգամ, խորհել բոլոր այն մարտահրավերների մասին, որոնք կանգան են մեր հայրենիքի և սփյուռքահայության առջև:

- Մենք պետք է լինենք առավել զգուն մեր ազգային հիմնախնդիրների նկատմամբ, որպեսզի կարողանանք դիմագրավել ու ճանապարհի հարթել մեր ազգային ուխտի և իղծերի համատեղ իրականացման համար:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման իրականացման գործընթացը շարունակվում է և մենք դեռ անելիքներ ունենք, ինչպես միջազգային այնպես էլ համազգային մակարդակներով:



ՀԲԸՄ-ի ծեղանարկած հանդիպումը, բեմի վրա են՝ ՀԲԸՄ Կանանց բաժանմունքի նախագահուհի տկն. Աստիկ Բաբայանը և պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյանը:



«Արաքս» շաբաթաթերթի ծեղանարկած հանդիպումը, ծախից՝ Միասնական հանձնախմբի նախագահ պրն. Հարություն Քեչիշյան, պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան, թերթիս խմբագիր պրն. Մուկես Քեչիշյան:

Միասնական աշխատանքի կարևոր ձեռքբերումներից մեկն էլ համայնքում աշխատող միությունների և կառույցների միջև հարաբերությունների նոր մակարդակի արձանագրումն էր: Արժե այստեղ, կրկին անգամ, «Արաքս»-ի խմբագրական կազմի անունից, մեր շնորհակալական խոսքն ասենք ՀԲԸՄ-ի կենտրոնական Վարչությանը, որ միության սրահը առանց որևէ ակնկալիքի տրամադրեցին մեզ :

Ստեղծված բարեկամական մթնոլորտը, վստահաբար, ամենից առաջ մեծ օգուտ կբերի համայնքիս ազգային կյանքին:



Իրանահայ ազգային և մշակութային միության ծեղանարկը, ծախից՝ պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյան և ԻԱՄՍ նախագահ դոկտ. Անդրանիկ Սիմոնյան:



Իրանահայ գրողների միության ծեղանարկած հանդիպումը, բեմի վրա են՝ ԻԳՄ նախագահ պրն. Թորգոմ Տեր-Հակոբյանը և պրոֆ. Ալեքսանդր Սաֆարյանը:



թափել այդ լուծը և թուրք ժողովուրդը չի կարող բարոյական բավարարվածություն ստանալ առանց նման ճանաչման: Վաղը, երբ հայոց ցեղասպանությունը կճանաչվի Միացյալ Նահանգների, Եվրոմիության կողմից, նաև Թուրքիայի կողմից, միթե՞ չի լինելու Հայաստանը հայ ժողովրդին միավորող գաղափար: Լինելու է, և դա հայոց պետականության գաղափարն է: Ես կցանկանայի, որ այս օրը մեր գեղեցիկ հանդիպման ժամանակ մենք բոլորս հասկանայինք, որ այն ամենաբարձր արժեքը, որ ունի հայ ժողովուրդը դա հենց հայոց պետականությունն է և՛ Հայաստանում, և՛

**Եթե պիտի լինի արտահոսք այնպիսի գաղութից, ինչպիսին իրանահայ գաղութն է, ապա այդ արտահոսքը, իրականում պիտի լինի ներհոսք, այսինքն՝ ներգաղթ դեպի Հայաստան: Այստեղ դարերով մշակված հայերի, հայապահպանության աղապտացիոն մեխանիզմեր կան, հայապահպանության ուժեղ շունչ կա:**

Արցախում և ի սփյուռս աշխարհի: Հայոց երկու պետություններն են, որ միավորելու են: Հայաստանի ամրապնդումն է նաև մեր պատասխանը մեր բոլոր չկամեցողներին, թշնամիներին:

- Շատերը հարցնում են, թե՞ ի՞նչ պետք է անենք, որ արագացնենք դիվանագիտական հարաբերությունների հաստատումը Հայաստանի և Թուրքիայի միջև: Ի՞նչ պետք է անենք որպեսզի արագացվի սահմանի բացումը: Դրա պատասխանը մեկն է՝ քարոզարարական վրա դնել Հայաստանում, ամրապնդել Հայաստանի տնտեսությունը, ամրապնդել Հայաստանի քաղաքական կառույցները, ինստիտուցիոնալ բարձր մակարդակով, խորացնել ժողովրդավարությունը:

- Իրականում հայ-թուրքական սահմանը չբացելու և դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու մի կարևոր նախապայման կա: Թեև հաճախ խոսվում է հայոց ցեղասպանության ճանաչման-չճանաչման և Արցախի խնդրի մասին, բայց կա ևս մի պայման, որը ես հաճախ ասում եմ թուրք քաղաքական, մտավորական էլիտայի հետ հանդիպման ժամանակ, իրականում, թուրք հասարակական, քաղաքական էլիտան պատրաստ չէ գիտակցելու, որ հայը նույնպես իրավունք ունի իր պետականությունը ունենալու, որովհետև նրա մոտ տիրում է այն գաղափարը, որ հայը, դա օսմանյան կայսրության մի մասնիկ է՝ կրոնաթեոկրատական մի համակարգ, որ օսմանյան կառա-

վարության մեջ պիտի կառավարվի սուլթանների կողմից: Այս գիտակցությունը դեռ նստած է թուրք քաղաքական էլիտայի մեջ: Անշուշտ, կան նաև առաջադեմ մարդիկ: Դիմքը իր ընկերներից մեկի, Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուկի հետ նախաձեռնողն էր մի շարք մշակութային միջոցառումների և անշուշտ կան Փամուկի նման մարդիկ թուրք հասարակության մեջ, սակայն նրանք դեռևս պետական կարծիք ձևավորող չեն: Եվ դժբախտաբար այսօր տեսնում ենք, որ թուրքական ֆաշիզմը իրականում շատ ավելի ուժեղ է, քան թուրքական դեմոկրատիան: Այն կառավորվող դեմոկրատիա է և դեռևս պատրաստ չէ լիարժեք հարաբերությունների գնալ Հայաստանի հետ: Սրանով է պայմանավորված արդեն մյուս նախապայմանները: Հիմա ո՞րը պետք է լինի մեր պատասխանը: Այն պետք է լինի Հայոց Պետականության ամրապնդումը:

- Այսօր մենք լուրջ ձեռքբերում ունենք, դա Հայաստանի զինված ուժերն են, որ տարածաշրջանում ամենալուրջ, ամենակայացած բանակն է: Այդ մասին մենք խոսում ենք հպարտությամբ, ես էլ որպես պաշտպանության նախարարության նախկին աշխատակից հպարտությամբ եմ դա ասում: Ամենակին Ադրբեջանի բարի կամքը չէ, որ մարտական գործողությունները չեն վերսկսվում: Նրանք գիտեն, թե ինչ կարող է լինել դրա արդյունքը, դա կարող է լինել Ադրբեջանի հերթական պարտությունը: Բայց դա չի նշանակում, որ մենք պիտի չամրապնդենք մեր զինված ուժերը, որ պիտի չամրապնդենք մեր տնտեսությունը, չի նշանակում, որ պիտի չամրապնդենք մեր կրթական, գիտակրթական համակարգը, որովհետև սա է ազգի ռեակցիան, ազգի աղապտացիան, մեր պատասխանը բոլոր մարտահրավերներին:

- Ես կցանկանայի, որ հայոց ցեղասպանության հիշատակի հերթական միջոցառումը, հայ անխնայ մտավորական Հրանտ Դիմքի հարգանքի երեկոն, մեր այս գեղեցիկ հանդիպումը իրանահայ մտավորականների հետ, ավարտեինք մեկ ընդհանուր հայտարարով: Այն ամենակարևորը, այն ամենաթակարծեքը, ինչ մենք ունենք դա Հայաստանի և Արցախի համապետություններն են: Ես կցանկանայի, որ մեր այս հանդիպումները ավարտեինք լավատեսական նոտայով և այն լինեի հայ սփյուռքի հայոց պետականության շուրջը համախմբվելու և մայր հայրենիքի շուրջը համախմբվելու հերթական մի քայլ:

- Ինձ համար խորին համոզում է, որ մի օր անպայման հայ ժողովուրդը հավաքվելու է Մասիսի փեշերին, հավաքվելու է Մասիսի ստորոտում, Մասիսի շուրջ բոլորը: Եվ սա կարող է լինել մեզ միավորող իդեալը: Շնորհակալություն:



Ասմունքում է ժողգեֆ Ամիրյանը



Ասմունքում է Արթին Բաղումյանը



Երգում են Արուֆին Ալեքսանյանը և օր. Անաշե Մարգարյանը

### ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒՄ

ՀԱՅԱՊԱՅՊԱՆՈՒՄԸ ՄԻԱՅՆ ՀԱՅԵՐԵՆ ԽՈՍՆԵԼՈՎ ՉԷ, ԱՅՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՄՏԱԾԵԼՈՎ ՈՒ ՀԱՅԵՐԵՆ ԳՈՐԾԵԼՈՎ

Ամեն տարվա, ապրիլի երկրորդ տասնօրյակը հատուկ աշխուժություն է ապրում մեր երիտասարդությունը: Եվ այն ժամերին երբ իրանահայության մեծամասնությունը անուշ քնի մեջ է, հանձնառու երիտասարդությունը Թեհրանի, Սպահանի, Շահինշահի, Արաքի, Թավրիզի և այլ քաղաքների պատերը «զարդարում» է Ապրիլի 24-ին՝ Հայոց Ցեղասպանության, նվիրված պատահաններով, որպեսզի ոչ միայն հայության, այլ նաև ուրիշներին հիշեցնի, որ մենք արդար մի դատ ունենք և միչև այն ժամանակ, որ չլուծվի մեր հարցը մենք հանգիստ չենք ունենալու...

Այդ, հայապահպանումը ոչ միայն լուրջագների այլ նաև գործի մեջ է: Կեցցեք տղաներ, վարձքներդ կատար:



**Սկաուտական շքերթը, ասմունքները, երգերը, պարերը, թատերական ելույթները և իվերջո ամենից կարևորը՝ շատ երևացող ու մասին քիչ խոսվող, բեմահարդարանքը, որի իրականացման համար իսկապես մեծ ձիքը ու տքնաջան աշխատանք էր ի գործ դրել պրն. Հայկ Խաչավին, դրական մեծ ազդեցություն թողին հանդիսատեսի վրա: Ուստի մնում է միայն Շնորհակալության խոսք ասել բոլոր նրանց, ովքեր աշխատեցին այս գեղեցիկ աշխատանքի իրագործման համար:**


# Կրիսապարդական էգ

Էջի պատասխանատու՝ Միլվիա Հայրապետյան

## Հաջողությունը նրանք է, ով...

- Հաջողությունը նրանք է, ով գետին ընկնելուց հետո կրկին վեր կենալ գիտի:
- Հաջողությունը նրանք է, ով իր հզոր ոտքերին հենվելով, մերժում է արտաքին բոլոր ուժերին:
- Հաջողությունը նրանք է, ով սառնասրտու-

- թյունն ու համեստությունը հաջողության կարևոր կետերից է համարում:
- Հաջողությունը նրանք է, ով յուրաքանչյուր պարտություն իր համար հաջողության մոտենալու մի աստիճան է համարում:
- Հաջողությունը նրանք է, ով ինքնավստահությունով հանդերձ, սիրով ընդունում է քննադատությունները:
- Հաջողությունը նրանք է, ով դիմավորում է այն ինչին վախենում է նրանից:
- Հաջողությունը նրանք է, ով իր բարձրությունը, ուրիշների ցածրանալու մեջ չի փնտռում:
- Հաջողությունը նրանք է, ով հույսի փոքրիկ մշույլներից պայծառ արեգակ է սարքում իր համար:



## Ծնողները լավ խորհրդատուներ են

Վաղուց ընդունված սովորույթները, որ ծնողներն են պայմանավորվում ամուսնության հետ կապված հարցերում և նույնիսկ իրենց վճռական խոսքն ասում ընտրություն կատարելու վերաբերյալ շատերին դուր չի գալիս: Շատ երիտասարդներ կարծիք են հայտնում, որ

արևելյան երկրներից ներգաղթածների սովորույթներն ու արժեքները և եկել այն եզրակացության, որ ծնողները իսկապես ավելի ճիշտ ընտրություն են կատարում իրենց երեխայի համար: Առաջին հերթին, նրանք ավելի լուրջ ու ծանրակշիռ փաստարկների վրա են հիմնվում որևէ եզրակացության հանգեցնելու: Երկրորդ հերթին ընտրում են նրան, ով կա-



ծնողների գիտարկումները իրենց սիրած անձի վերաբերյալ, չեն կարող ավելի ճշգրիտ լինել: Բայց փորձը ցույց է տալիս, որ հատկապես ծնողների խորհրդով կամ համաձայնությամբ կատարված ընտրությունը հիմնականում ավելի երկարակյաց միության սկիզբ է դառնում, ընտանիքում իշխում են հարմոնիան ու փոխըմբռնումը: Բրիտանական հետազոտողներն ուսումնասիրել են Մեծ Բրիտանիայում ապրող

րող է սիրվել իրենց աղջկա կամ տղայի կողմից: Նրանք դա բացատրում են այն հանգամանքով, որ մարդիկ ինտուիտիվ (ներքնաբերական) կերպով ձգտում են իրենց ընտանիքը կառուցել այնպես ինչպես տեսել են մանուկ հասակում իրենց ծնողների մոտ: Իսկ այդ հարցում էլ ո՞վ կարող է ավելի օգտակար լինել, եթե ոչ ծնողները:

## ԱՌԱՎՆԵՐ

**ՍՈՒՏԸ**  
(թրիստոնեական առակ)  
Քարոզն ավարտելով քահանան ասաց.  
-Հաջորդ կիրակի ես ձեզ հետ կխոսեմ ստի մասին: Որպեսզի ձեզ համար ավելի հեշտ լինի հասկանալ, թե խոսքն ինչի



## ԵՐԵՔ ԽՈՍՏՈՒՄ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՍ ՏԱԼ ԻՆՔԴ ՔԵԶ

### Մի վերափոխիր

Եթե դու մանկապարտեզի դաստիարակչուհի ես, դպրոցի ուսուցչուհի կամ էլ ոստիկանության աշխատակից և ծառայողական պարտականություններից երկելով այլ քաղաքացիներին օգնում ես ավելի լավ դառնալ, այս կետը բաց թող: Նրջապատողներին ընդունելը այնպիսին, ինչպիսին նրանք կան, փոխում է ողջ աշխարհի պատկերը: Դու նրանցից չես պահանջում լավ վերաբերմունք, այլ շնորհակալություն ես հայտնում դրա համար: Չես նեղանում ընկերուհուց, երբ նա կարմիր գինին թափում է սպիտակ բազմոցին, կամ ընկերոջը, որը քեզ հետ ընթերցել փոխարինում է ընկերների հետ ֆուտբոլ գնալով, այլ՝ անկեղծորեն ներում ես: Դու չես փորձում վերափոխել մորը, որը քեզ մշտապես հինգ տարեկան երեխա է համարում: Դու օբյեկտիվորեն գնահատում ես իրավիճակն ամբողջովին և կառուցում ես հետագա կյանքը՝ արված եզրակացություններին համապատասխան: Եվ գիտես, արդյունքում շրջապատողներն էլ կդադարեն քեզ վերափոխելու փորձեր կատարել:



մարդկանց, որոնք իրենց բացասական հույզերով կանոն են քո հնարգիտ և կառուցողական մոտեցում ցուցաբերելով ցանկացած հարցի, հանկարծ կհայտնաբերես, որ ապրելն ավելի հեշտ և ուրախ է դարձել:

### Փոխիր ինքդ քեզ

Մտածիր ոչ սովորական ձևով, փորձիր լայնացնել մտահորիզոնը, ազատվել սեփական թերություններից: Օրինակ, սկսիր պայքարել խանդի, ծուլության, կեղծավորության, անհամբերության կամ նախանձի դեմ: Աստիճանաբար դու կհարմարվես դրական փոփոխություններին և մի օր էլ քաղցրավենիքի խանութ գնալու փոխարեն քեզ կգտնես մարզադահլիճում: Ահա և մի այլ միտք: Մտածիր, լսո՞ւմ ես արդյոք դիմացիները, թե՞ մտածում ես, թե երբ է նա դադար տալու, որ ինքդ խոսես: Հիշիր արևելյան իմաստությունը. «Ուշադիր լսողը հասկացողի է վերածվում»: Հաղթանակը՝ հասկացես սեփական անձի նկատմամբ, թե երբ է տալիս, ավելացնում ուժերը, նոր սխրանքների համար ոգեշնչում:

## Ապրիր դրական հույզերով

Յուրաքանչյուրն ունի լավատես լինելու իր չափանիշները: Բայց բոլորի համար ընդհանուր է լավատեսական տրամադրվածության ձգտումը: Արհեստական ժպիտը և անհոգ ծիծաղը հոգեկան անհավասարակշիռ վիճակում ուրախություն չեն բերի: Նրջապատից հեռացնելով այն

## ՍԱՆՐՎԱԾՔ Նորածնություն (1)

Սանրվածքի հարցում այսօր նորածնությունը սահմանափակումներ չի ճանաչում. կանայք կարող են ընտրել ցանկացած բնորոշ ոճի սանրվածքներ: Անկախ մազերի որակից և երկարությունից կարելի է ընտրել այնպիսի սանրվածք, որը կամբողջացնի ձեր կերպարը, կհամապատասխանի ձեր իմիջին: Այսօր երկար, արծակած վարսերը կարող են լինել ուղիղ կամ փոքր-ինչ անփույթ, ավիթածե: Նորածն են նաև խոպրակները: Այնպես որ, ընտրությունը ձերն է: Օճորակից վեր հավաքած դասական սանրվածքն այս սեզոնին դարձել է առավել ազատ և պշոուն: Ընդ որում, կարևոր է, որ ստեղծվի այն տպավորությունը, թե մազերն անփույթ են հավաքված: Հավաքած մազերը անփոխարինելի են գործարար կանանց համար. այս սանրվածքը թեպետ գուսպ է, բայց, միաժամանակ, նաև կանացի: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ճակատի մազափնջի



վրա: Նորածն են խիտ «ֆրանսիական» մազափունջը, մինչև հոնքերը հասնող ուղիղ, ինչպես նաև երկար ու թեք, անհամաչափ կամ շեղակի կտրված մազափնջերը: Դիմափար դարձան ժամանակի հարկ է հաշվի առնել, որ եթե ճակատի մազափունջը երկար է ու խիտ, ապա անպայման պետք է աչքերն ընդօժվեն, իսկ շրթունքները պետք է աչքի չընկնեն: Կարճ սանրվածքները նույնպես նորածն են և աչք են շոյում, բայց հարկ է նշել, որ որքան էլ կարճ լինի սանրվածքը, այն պետք է կանացի լինի և փոքր-ինչ անուրջ:

մասին է լինելու, դրանից առաջ տանը կկարդաք Մարկոսի Ավետարանի տասնյոթերորդ գլուխը: Հաջորդ կիրակի իր քարոզն սկսելուց առաջ քահանան ասաց. -Խնդրում եմ բոլոր նրանք, ովքեր կարդացել են տասնյոթերորդ գլուխը, ձեռք բարձ-

րացնեն: Գրեթե բոլոր ներկաները ձեռք բարձրացրեցին: -Այ հենց ձեզ հետ էլ ես ցանկանում էի խոսել ստի մասին, - ասաց քահանան: -Մարկոսի Ավետարանը տասնյոթերորդ գլուխ չունի: «Ապրելու արվեստը», Ամիրյան

**ՀԱՎԱՏԱ**

Դժվար է օրը, տարին և վայրկյանն անգամ, Բայց դու հավատա՛ կյանքը երազի պես կանցնի, կգնա: Ու թե մի օր ցնցվես դու ցավից, Կորուսյալ սիրուց ցնորվես մի պահ, Հավատա վստահ և մի կասկածիք Ապաքինվելու է սիրտդ խոցոտված:

Երբ ճակատագրի հողմերի դիմաց Դու կարողանաս չճնկել վիատված, Երբ քահանա երազներից համար խորտակված, Այն ժամ դու կհասկանաս՝ Սերն այցելում է նրանց, Ովքեր հավատ ունեն անանց: Ժաքլին Ղազարյան

## Իտալուհիներն ամենաբարեկազմ են Եվրոպայում

Իտալուհիներն ամենաբարեկազմ են Եվրոպայում: Իտալացի կանայք ամենաբարեկազմն են Եվրոպայում: Ըստ Եվրոպայի վիճակագրական ինստիտուտի (Եվրոստատ) տվյալների՝ իտալացի կանանց միայն 7,9 տոկոսն է տառապում ավելորդ քաշից: Նիդարլենդները և Գերմանիան ամենաավստիկները, դանիուհիները և Ֆրանսուհիները: Եվրոստատը քաշի հետ կապված խնդիրներ է նշել անգլուհիների (23 տոկոս), գերմանուհիների (21,7 տոկոս), Մալթայի բնակչուհիների մոտ (21,2) : Անգլիայում գեր է տղամարդկանց 22,3 տոկոսը, իսկ Գերմանիայում՝ 18,8 տոկոսը: Իսկ Իտալիայում տղամարդկանց սոսկ 18,3 տոկոսն է համարվում գեր: Իտալացիներից ավելի բարեկազմ են միայն ռուսիացիները՝ ավելորդ քաշից տառապում է 7,7 տոկոսը, և հոլանդացիները՝ 7,9 տոկոս:

**Թերություններին կարելի է համակերպվել, բայց կան թերություններ, որոնք կարող են քայքայել հարաբերությունները:**

خانواده دینک در پاسخ به سؤال خبرنگاری گفته است ، رییس اداره اطلاعات و امنیت شهر استانبول از ماه های پیش از آماده سازی ترور دینک مطلع بوده اما با این حال هیچ اقدامی در حفاظت از مرحوم به عمل نیاورده و با این کار در انجام وظیفه خود کوتاهی کرده است. و جرم «عدم پیشگیری از جنایت» را مرتکب گردید.

و اما روزنامه ارمنی زبان «مارمارا» چاپ استانبول طی خبری نوشت: «فتحی چتین» از وکلای خانواده دینک شکایتی را به انضمام نامه ای که از سوی اداره امنیت شهر «تراپوزان» به شعبه این سازمان در استانبول ارسال شده بود را تقدیم دادگاه کرده است». در این نامه اداره امنیت تراپوزان یعنی همان شهری که قاتل «هراند دینک» در آن زندگی می کرد شدیداً به احتمال قتل دینک و خطری که وی را تهدید می کند اشاره می کند. به نوشته «مارمارا» وکیل دینک همچنین گفته است که تا قبل از قتل دینک ۱۷ گزارش اینچینی برای نیروهای امنیتی استانبول ارسال شده بود، اما آنان هیچ عکس العمل و اقدامی در محافظت از جان وی نکردند. لذا مقامات ارشد امنیتی استانبول باید به جرم «مشارکت در وقوع جرم» محاکمه شوند.

#### آمادگی روسیه

به گزارش شبکه تلویزیونی NTV ترکیه، روسیه در نظر دارد تا در مزایده اعلام شده وزارت دفاع ترکیه برای خرید پدافند ضد موشکی شرکت کند. این شبکه تلویزیونی با استناد به اخبار منتشره در پایگاه خبری اینترنتی RUS روسیه اعلام کرده است که روسیه آماده است تا پدافند ضد موشکی پیشرفته S-300 خود را به ترکیه بفروشد این پدافند رقیب سر سخت موشک های پاتریوت آمریکایی می باشد. به گفته NTV هر چند ژنرال



های ترک با در نظر گرفتن کارایی بهتر خواهان خرید سیستم های روسی می باشند، اما با در نظر گرفتن نفوذ سنتی آمریکا در ترکیه به احتمال یقین شرکت آمریکایی برنده این مزایده خواهد شد. طبق این گزارش کشورهای زیادی در خاور دور درخواست خرید این پدافند ضد موشکی را به سازنده آن ارائه کرده اند.

#### مخالفت

«نورتون شوارتز» از فرماندهان یگان ترابری ارتش آمریکا می گوید در صورت تصویب طرح شناسایی قتل عام ارمنیان از سوی مجلس نمایندگان آن کشور لطمه شدیدی به توان روسی آمریکا وارد خواهد شد. به گزارش کانال تلویزیونی NTV ترکیه این ژنرال آمریکایی در نشست کمیسیون امور نظامی مجلس نمایندگان آن کشور طی سخنانی گفته است در صورتی که مجلس نمایندگان طرح قتل عام ارمنیان را به رسمیت بشناسد این امکان وجود دارد که ترکیه ممانعت هایی برای ارتش آمریکا در استفاده از پایگاه هوایی اینچیرلیک که نقش مهمی در ارسال



تدارکات به عراق دارد ایجاد کند. به گزارش NTV این نظامی آمریکایی به اعضای کمیسیون همچنین گفته است: «مجزو استفاده از حریم هوایی ترکیه برای نیروی هوایی آمریکا بسیار حائز اهمیت است». در بخش دیگری از این خبر آمده است: «بعد از به رسمیت شناختن قتل عام ارمنیان از سوی سنای فرانسه ترکیه پرواز هواپیماهای فرانسوی از فراز حریم هوایی خود را منع و دفتر همکاری دفاعی فرانسه در آنکارا را نیز تعطیل نمود. مسئله ای که ممکن است برای ما نیز تکرار شود».

#### یک دقیقه سکوت

